

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

2022-2024

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ԵՎ 2022

ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

2019-2021 թվականների ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում շարունակաբար ներդրվել են փորձագիտական հետազոտությունների նոր ենթատեսակներ, մշակվել են գիտականորեն հիմնավորված արդիական նոր ուղղություններ, ինչպես նաև կատարելագործվել և զարգացվել են նախորդ տարիներին ներդրված փորձագիտական հետազոտությունների մեթոդներն ու մեթոդիկաները, որոնք հիմնված են նորագույն տեխնոլոգիաների վրա, իրականացվել են արդյունավետ /օպտիմալ/ փորձագիտական մեթոդիկաների և ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարք-սարքավորումների կիրառմամբ փորձաքննություններ: Կազմակերպությունը նաև ընդլայնել է համագործակցության շրջանակները միջազգային մի շարք հեղինակավոր գիտական և փորձագիտական կառույցների հետ՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ կազմակերպել փորձագիտական աշխատանքների իրականացումը կազմակերպությունում, ինչպես նաև առավելագույնս ուսումնասիրել փորձագիտական բնագավառի համար կարևորագույն նշանակություն ունեցող գիտության այս կամ այն ոլորտի միջազգային առաջավոր փորձը՝ Հայաստանի Հանրապետությունում փորձագիտական հետազոտական նորարական հնարավորությունների ներդրման նպատակով:

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 2019-2021 թվականների ընթացքում առաջնահերթ իրականացրել է փորձաքննություններ ընդլայնելով փորձագիտական տեսակները՝ նախկինում 26-ից հասցնելով մինչև 27 փորձագիտական տեսակների, իսկ փորձագիտական ենթատեսակներով 110-ից մինչև 131 փորձագիտական ենթատեսակների: Կազմակերպությունում համաձայն հաստատված կառուցվածքի և հաստիքացուցակի 27 փորձագիտական տեսակներով գործում են 18 փորձագիտական բաժիններ (Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական, սննդամթերքի և խմիչքների, էկոլոգիական, հողագիտական և կենսաբանական, տնտեսագիտական և հաշվապահական, շինարարատեխնիկական, ճարտարագիտատեխնիկական, ապրանքագիտական, ձգաբանական, հետքաբանական, ֆոտոտեխնիկական, դիմանկարային, տեսա- և աուդիոձայնագրական, ձեռագրաբանական, հեղինակային և փաստաթղթաբանական, ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և տրանսպորտահետքաբանական, պայթյունատեխնիկական և հրդեհատեխնիկական, մշակութաբանական, դատաբժշկական, համակարգչատեխնիկական, հոգեբանական և դեպքի վայրի)՝ իրագործելով 27 տեսակներով դատական փորձաքննություններ ժամանակակից գիտական պատկերացումներին համապատասխան մեթոդների կիրառմամբ: Ընդ որում՝ փորձագիտական ստորաբաժանումներում իրականացվող փորձաքննությունների տեսակների շրջանակներում 2019-2021 թվականների ընթացքում Կազմակերպությունը սկսել է իրականացնել փորձաքննություններ այնպիսի նոր ենթատեսակներով և տեխնոլոգիական ուղղություններով, ինչպիսիք ՀՀ-ում սկսել են կիրառվել առաջին անգամ՝ միայն ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում: Բոլոր ուղղություններով կատարված փորձաքննությունների արդյունքները նշանակալիորեն բարելավել են համապատասխան գործերով նախաքննության հնարավորությունները և որպես հետևանք էապես աճել են դրանց կիրառմամբ իրականացվող փորձաքննությունների նշանակման դեպքերը:

Վերլուծելով վերջին երեք տարիների ընթացքում Կազմակերպությունում իրականացված փորձագիտական գործունեության ձեռքբերված հաջողությունները կարևոր է նշել, որ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը հանդիսանում է միակ կազմակերպությունը, որն ակտիվ իրականացնում է քաղաքականություն փորձաքննությունների տեսակների և ենթատեսակների ընդլայնման և միջազգային չափանիշներին համապատասխանեցման ուղղությամբ:

Ստորև ներկայացվում են 2019-2020թթ. ընթացքում գիտականորեն հիմնավորված արդյունքների ստացմամբ իրականացված դատական փորձաքննությունների տեսակների և քանակների ամփոփ տվյալները՝ աղյուսակով.

N	Տարեթիվ	Քրեադատարական շրջանակներում կատարված դատական փորձաքննությունների	
		քանակային ցուցանիշը (հատ)	տեսակների քանակը (հատ)
1.	2019	10609 (18.12.2019թ. դրությամբ)	27
2.	2020	10641 (24.12.2020թ. դրությամբ)	27
3.	2021	1744 (28.02.2021թ. դրությամբ)	27

Գենդերային հավասարության պետական քաղաքականության հիմնական ուղղությունների ապահովման առումով ստորև ներկայացվում է Կազմակերպությունում աշխատող տղամարդկանց և կանանց թվաքանակի հարաբերակցությունը 2019-2021 թվականների ժամանակահատվածում.

2019		2020		2021	
տղամարդ	կին	տղամարդ	կին	տղամարդ	կին
102	90	104	86	95	83
25 ղեկավար	16 ղեկավար	27 ղեկավար	15 ղեկավար	25 ղեկավար	14 ղեկավար

Վերոգրյալ աղյուսակից երևում է, որ Կազմակերպությունում կին աշխատողների թվաքանակը միջինում կազմում է շուրջ 47%: Կազմակերպությունում աշխատանքի ընդունվելիս, ինչպես նաև աշխատողի գործունեության ընթացքում բացառված են գենդերային խտրականության դրսևորումները:

Հատուկ պետք է նշել նաև, որ Կազմակերպության փորձագիտական գործունեություն իրականացնող անձնակազմի կողմից շարունակվել են իրականացվել ՀՀ-ում փորձագիտական տեղեկատվական բազաների ստեղծման և համալրման աշխատանքները, մասնավորապես.

- դատաբժշկական փորձաքննությունների բաժնի տոքսիկոլոգիական փորձաքննությունների բաժանմունքում իրականացվել են կենսաբանական օբյեկտներում (մազ, մեզ, արյուն) առավել տարածված թմրամիջոցների, հոգեմետ /հոգեներգործուն/ նյութերի, դեղամիջոցների, ցնդելի նյութերի՝ մասնավորապես էթիլ սպիրտի, որոշ թունավոր նյութերի հայտնաբերման և որոշման ժամանակակից գործիքային եղանակներով որակական և քանակական հետազոտությունների համար անհրաժեշտ ուսումնասիրություններ, որի բավարար նախապայմաններն են քիմիկոտոքսիկոլոգիական անալիզի գիտամեթոդաբանական ուսումնասիրություններն ու գործիքային եղանակներով հետազոտությունների հնարավորությունների ընդլայնման կոնկրետ գործընթացները: Հաշվետու ժամանակահատվածում

վերանայվել և վերամշակվել են բաժանմունքում գործող հետազոտական մեթոդիկաների կիրառման ընթացակարգերը:

- Իրականացվել են խորը և ծավալուն գիտագործնական ուսումնասիրություններ «ՀՀ տարածքում թմրամիջոցներ գործածած անձանց վերաբերյալ վիճակագրական տվյալները և վերջին տասնամյակում փորձաքննության ենթարկված անձանց ներգրավվածությունը թմրամիջոցներ գործածողների շարքում՝ ըստ ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում իրականացված դատաթունաբանական արդյունքների» թեմայի ուղղությամբ: Կատարված գիտագործնական ուսումնասիրության արդյունքում արտացոլվել են 2007-2019թթ. ընթացում բաժանմունքի կողմից կենդանի անձանց վերաբերյալ իրականացված տոքսիկոլոգիական փորձաքննությունների արդյունքների վիճակագրությունը, որտեղ պարզ է դառնում, որ մեր տարածաշրջանում թմրամոլների մոտ անհամեմատ առավել շրջանառվում է կանաբիս թմրամիջոցը, որի պատճառ կարող է հանդիսանալ այդ թմրամիջոցի վերաբերյալ ստեղծված լոյալ դիրքորոշումը, ձեռք բերման դյուրինությունը և գնային մատչելիությունը:

- ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի համապատասխան մասնագետները շարունակելու են իրենց ակտիվ մասնակցությունը և համագործակցությունը ցուցաբերել ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի վարչության, ՀՀ առողջապահության նախարարության, ՀՀ վարչապետի աշխատակազմին կից ազգային անվտանգության խորհրդի հետ թմրանյութերի, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորներին վերաբերող տարաբնույթ հարցերի քննարկմանը, ինչպես նաև ակտիվ մասնակցություն ունենալ նոր ի հայտ եկած ժամանակակից թմրամիջոցները և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը ՀՀ կառավարության «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, շրջանառությունն արգելված թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսերի ցանկը, դրանց մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի պրեկուրսորների խոշոր և առանձնապես խոշոր չափերը, թունավոր նյութերի ցանկը, խիստ ներգործող նյութերի ցանկը և դրանց խոշոր չափերը սահմանելու մասին» թիվ 707-Ն որոշման մեջ ընդգրկելու, համապատասխան անհրաժեշտ փոփոխություններ կատարելու, ինչպես նաև այլ ոլորտներում տարվող աշխատանքներում ըստ Փորձաքննությունների ազգային բյուրոյի մասնակցությամբ կամ կարծիքի ներկայացվող առաջարկությունների,

- 2021-2022թթ-ի ընթացքում նախատեսվում է իրականացնել Հայաստանի Հանրապետության տարբեր մարզերում աճող կանեփի բույսերի հետազոտություն, տվյալների հավաքագրման և քարտեզագրման աշխատանքներ՝ կախված բույսի վեգետացիոն շրջանից և մշակումից՝ ելնելով կանեփի բույսի մեջ պարունակվող կանաբինոիդային շարքի ակալոիդների, այդ թվում նաև՝ թմրակտիվ բաղադրատարր հանդիսացող տետրահիդրոկաննաբինոլի քանակությունների հարաբերակցությունից, ինչը կնպաստի դատափորձագիտական ոլորտի մի շարք հարցերի պարզաբանմանը: Շարունակվելու են նաև թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի դատափորձագիտական հետազոտության նպատակով կիրառվող միջազգային փորձագիտական մեթոդների և ընթացակարգերի ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում տեղայնացնելու աշխատանքները՝ վերջիններս այդ

նյութերի դատափորձագիտական հետազոտությունների իրականացման գործում կիրառելու նպատակով,

- 2021-2022թթ-ի նախատեսվում է կատարել «55 AA» մոդելի բոցային և «200 AA» գրաֆիտային ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրերի միջոցով գիտականորեն հաստատված մետաղների հիման վրա հետազոտությունների վերլուծություն, մասնավորապես՝ Na, K, Mg, Ca, Cr, Mn, Fe, Co, Ni, Cu, Zn, Cd, Hg, Al, Si, Pb, P, As, Be, Sn, Sb և Mo քիմիական տարրերի քանակական պարունակությունը պոչամբարներում և դրանց հարակից տարածքներում առկա հողերում, ջրերում, հանքային ապարներում: Հետազոտությունների արդյունքների հիման վրա ուսումնասիրվելու է շրջակա միջավայրի վրա ազդող ծանր մետաղների տարածման օրինաչափությունները, մասշտաբները և դրանց գոտիավորման սկզբունքները,

- շարունակվելու են ուսումնասիրվել «Niton XL3T 980» մոդելի (սերիաները համապատասխանաբար՝ XL3-73686 և XL3-96549) ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորներով աշխատելու նոր լրամշակված ընթացակարգի հիման վրա տարբեր մետաղների և դրանց համաձուլվածքների, այդ թվում՝ մետաղադրամների, թանկարժեք մետաղների, հողերի, հանքային ապարների բաղադրակազմերի փորձագիտական հետազոտությունների առանձնահատկությունները: Նախատեսվում է նաև կիրառել նոր փորձնական եղանակներ և կատարելագործել գործող մետաղները, ինչպես նաև կատարել նմուշապատրաստման հետազոտական օպտիմալ մետաղների կատարելագործման աշխատանքներ: Ներդրված ձուլման եղանակով մետաղական խառնուրդը համասեռ համաձուլվածքի վերածելու մետաղի կատարելագործման ուղղությամբ շարունակվելու են աշխատանքները, մասնավորապես՝ ձուլման գործընթացում թանկարժեք մետաղների կորուստների հնարավորինս նվազեցման և այլ օրինաչափությունների հայտնաբերման ուղղությամբ,

- համակարգչատեխնիկական փորձաքննությունների բաժնում մշակված ապարատածրագրային միջոցների արդիականացման ծրագրի շրջանակներում իրականացվել է հիշողության կրիչներում (այդ թվում՝ բջջային հեռախոսների ներքին հիշողության կրիչներում) պարունակվող տեղեկատվության հետազոտություններ՝ «EnCase Forensic v8.05» ծրագրային ապահովման միջոցով, «Tableau Forensic USB 3.0 SATA/IDE Bridge (T35u)» սարքերով և բջջային սարքերի փորձագիտական հետազոտության նպատակով կիրառվող «Cellebrite UFED Cloud Analyzer» ծրագրային ապահովումով: «Tableau Forensic USB 3.0 SATA/IDE Bridge (T35u)» սարքերի (ապարատային բլոկիռատորներ) կիրառման ապահովումը զգալիորեն արագացնում է հիշողության կրիչների փորձագիտական պատճենների ստեղծման գործընթացը, իսկ «EnCase Forensic v8.05» ծրագրային ապահովումը հնարավորություն է ընձեռում իրականացնել առավել խորը և բազմակողմանի հետազոտություններ: Բջջային սարքերի փորձագիտական հետազոտության նպատակով կիրառվող «Cellebrite UFED Cloud Analyzer» ծրագրային ապահովման միջոցով իրականացվել է հետազոտություններ՝ կապված բջջային սարքերի շահագործողի «ամպային» տեղեկատվությունից և համապատասխան բջջային հավելվածներից: 2021-2022թթ-ի համակարգչատեխնիկական փորձաքննությունների բաժնում ներդնելով «Berla iVe» ապարատածրագրային միջոցների փաթեթը նախատեսվում է իրականացնել նոր (հիմնականում 2010թ-ից հետո արտադրված) տրանսպորտային միջոցների ներկառուցված հիշողության կրիչներում պարունակվող տեղեկատվության արտածման և վերլուծության հետ կապված աշխատանքներ: Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է լիարժեք ուսումնասիրել և տեղայնացնել համակարգի կիրառման սկզբունքները, իրականացնել գործնական հետազոտություններ և տարբեր քրեական

գործերով նշանակվող համապատասխան փորձաքննությունների շրջանակներում ստանալ էական նշանակություն ունեցող մի շարք օբյեկտիվ տեղեկություններ,

- շարունակվել է նմուշառումների և հետազոտությունների իրականացումը ՀՀ տարբեր մարզերի տարածքներից կտրված և կանգուն ծառերից: Հաշվետու ժամանակահատվածի ընթացքում բոլոր տարածքներից վերցված նմուշները հետազոտվել են, վերլուծվել են և պահպանվել ստեղծվող տվյալների բազայում: Նմուշներն ուսումնասիրվել են «Lintab» սարքի միջոցով, ստացված տվյալները վերլուծվել են «TSAP-Win» ծրագրի միջոցով: Առաջին անգամ Հայաստանում ստեղծվել է նմուշառման համապատասխան վայրերի տվյալների բազա, որն իր մեջ ներառում է տեղեկատվություն հետազոտվող տարածքներում ծառերի տեսակային կազմի, աճի ինտենսիվության վերաբերյալ և այլն: ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում ձևավորվում է ծառերի տարածքային պատականեղիության որոշման համար անհրաժեշտ տվյալների բազա, որը պարունակում է յուրաքանչյուր տարածքին բնորոշ ծառերի աճի ինտենսիվության մասին տվյալներ: Մինչ օրս ձևավորված բազան ներառում է տվյալներ հետևյալ տարածքներից.

«Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ճամբարակի» անտառոտնտեսության «Դպրաբակի» անտառապետության 2-րդ, Գետիկի 3-րդ, 6-րդ և 7-րդ, Գեղարքունիքի մարզի «Արտանիշ» համայնք «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Շամախյան» տեղամաս մասնաճյուղի 7-րդ պահաբաժին, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Շամախյան տեղամասի 5-րդ պահաբաժնի «Գյուլի թալա» կոչվող հատված, «Հայանտառ» ՊՈԱԿ «Իջևանի անտառոտնտեսություն» մասնաճյուղի «Խաչարձանի անտառապետության» թիվ 6 պահաբաժնի «Ջաննանց գոմատեղ» կոչվող տարածք, «Հայանտառ» ՊՈԱԿ «Իջևանի անտառոտնտեսություն» մասնաճյուղի «Իձա քար» կոչվող տարածք, «Դիլիջան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Շամախյան տեղամասի 7-րդ պահաբաժնի «Աղվեսի թալա» կոչվող հատված, «Դիլիջանի ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Դիլիջան տեղամաս»-ի 5-րդ, պահաբաժին, «Դիլիջանի ազգային պարկ» ՊՈԱԿ-ի «Հաղարծին տեղամաս»-ի 3-րդ, 5-րդ, 7-րդ 1 պահաբաժիններից, «Տաք ջուր» Հանքավան տեղամաս, «Նաիրի ռեզորթ» Հանքավան տեղամաս, Լոռի «Ստեփանավան» քաղաք, Սյունիքի մարզի «Կապանի անտառապետության» մասնաճյուղի «Ճակատենի» անտառապետության թիվ 6 պահաբաժին, «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Սևքարի անտառոտնտեսություն մասնաճյուղի Գետաշենի անտառապետության տարածք, Տավուշի մարզի Իջևան քաղաք, Բյուրականի Աստղադիտարանի տարածք, Արմավիրի մարզում գտնվող ՀՀ ԳԱԱ «Բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱ կազմակերպությանը պատկանող արագած բարդիների տնկադաշտերի տարածք, «Վանանդ» գյուղ, Արարատի մարզ գյուղ «Նարեկ» Երևան քաղաքի՝ Նոր Նորք, Նոր Արեշ, Արաբկիր, Աջափնյակ և Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջաններ:

Հետազոտության ընթացքում ներրվել է և արդեն իսկ հաջողությամբ կիրառվում է Հայաստանում գիտական հետազոտությունների նոր ճյուղ, որը թույլ է տալիս ծառերի տարեկան օղակների հետազոտության միջոցով ստանալ բնության համար կարևոր տվյալներ և կիրառել դրանք՝ հետագա տնտեսական հաջողությունների ապահովման նպատակով: Այդպիսի հետազոտություններն արվում են աշխարհի մի շարք զարգացած երկրներում: Ծառերի տարեկան օղակների հաստության որոշմամբ կարելի է պատկերացում կազմել նաև ծառի վրա շրջակա միջավայրի և մարդու ազդեցության վերաբերյալ: Ծառերի տարեկան օղակների նշված հետազոտությունները կատարվում են դենդրոփորոնոլոգիական ուղղությամբ գիտական տվյալների կիրառմամբ: ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում շարունակվում է արդեն իսկ ձևավորված ծառերի տարածքային պատականեղիության որոշման համար անհրաժեշտ

տվյալների բազայի համալրումը: Նշված տվյալներից ստեղծված բազայում ծառերի աճի ինտենսիվության և ժամանակի ընթացքում դրանց փոփոխության մասին տեղեկատվությունը կարող է նաև օգտագործվել կլիմայի գլոբալ փոփոխությունների պայմաններում ծառերի աճի ինտենսիվության փոփոխության կանխատեսման և մոդելավորման համար, որն էլ իր հերթին կարող է օգտագործվել որպես լրացուցիչ գործիք բնապահպանական աշխատանքների պլանավորման և իրականացման ժամանակ:

- Շարունակվել են նախորդ տարիների ընթացքում կազմակերպության փորձագիտական ստորաբաժանումներում ստեղծված տվյալների շտեմարանների համալրման աշխատանքները, մասնավորապես՝ կեղծ մետաղադրամների բաղադրությունների (թվով 570), կեղծ թղթադրամների (<<, ՌԴ, ԱՄՆ, Եվրո, թվով 2315), գրելագործիքների (թվով 1590), սառը զենքերի նմուշների (թվով 433), տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի (թվով 72), փամփուշտների և պարկուճների (թվով 196), պայթուցիկ նյութերի արգասիքների (թվով 13), պարենային և ոչ պարենային ապրանքների, նաև անշարժ գույքի արժեքների, հայտնի հեղինակների ոճային և կենսագրական տվյալների (թվով 32), ինչպես նաև՝ GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար ներդրվել է նոր SUDMED-MS_2842 գրադարան, որն իր մեջ պարունակում է մոտ 2842 անվանում նյութերի տեսականի հատկապես սպայսների և դեղամիջոցների, հոգեմետ և թմրակտիվ բաղադրատարրերի: Ներդրված գրադարանի շնորհիվ իրականացվում են մի շարք նյութերի՝ հատկապես սպայսի կոմպոնենտների հայտնաբերում և իդենտիֆիկացում՝ բարձր ճշգրտությամբ: GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար ներդրվել է նոր **Cayman Spectral Library.new (CSL)** գրադարանը, որն իր մեջ պարունակում է մոտ 1832 անվանում նյութերի տեսականի հատկապես սպայսների և դեղամիջոցների, հոգեմետ և թմրակտիվ բաղադրատարրերի: Ներդրված գրադարանի շնորհիվ իրականացվում են մի շարք նյութերի՝ հատկապես սպայսի կոմպոնենտների հայտնաբերում և իդենտիֆիկացում՝ բարձր ճշգրտությամբ: GC-7890A MSD-5975C մոդելի մասս-սպեկտրոմետրի համար ներդրվել է նաև նոր **SWGDRUG.3.6L** գրադարանը, որն իր մեջ պարունակում է մոտ 3160 անվանում նյութերի տեսականի, հատկապես՝ սպայսների և դեղամիջոցների, հոգեմետ և թմրակտիվ բաղադրատարրերի: Ներդրված գրադարանի շնորհիվ իրականացվում են մի շարք նյութերի՝ հատկապես սպայսի կոմպոնենտների հայտնաբերում և իդենտիֆիկացում՝ բարձր ճշգրտությամբ:

Կազմակերպության կարևորագույն ձեռքբերումների շրջանակներում առանձնահատուկ պետք է նշել, որ առաջին անգամ Հայաստանում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը 2019 թվականից սկսել է կիրառել «Leica Geosystems» ընկերության վերջին սերնդի բարձր արագության (տարածաշրջանում եզակի) Leica RTC360 3D լազերային սկաներ՝ սֆերիկ պատկերավորման HDR և վիզուալ (ակնադիտական) իներցիոն (VIS) ներկառուցված համակարգերով՝ իրական ժամանակում տվյալների գրանցման համար, արբանյակային տեղորոշման կայան GPS Leica GS07/CS20 և 3D լազերային հեռաչափ Leica DISTO S910, ինչպես նաև 2020 թվականին ձեռքբերված Leica geosystems AG/Flexline TS 10 տախետոմետր սարքավորումները: Նշված սկաները հնարավորություն է տալիս դատական փորձագիտության բնագավառում փորձաքրեագիտական

լիցենզավորված ծրագրերով իրականացնել ձգաբանական, ՃՏՊ հանգամանքների և շինարարատեխնիկական փորձաքննություններ, ինչպես նաև համապատասխան քրեագիտական մյուս տեսակներով փորձաքննությունների ոլորտներում դեպքի վայրի հետազոտելի օբյեկտների, այդ թվում՝ ճանապարհաշինարարության, շրջակա միջավայրի, հրդեհի վայրի և այլ հետազոտությունների իրականացման ճշգրիտ, ամբողջական և անփոփոխ տվյալների ներառումով սկանավորման արդյունքների ստացում և մշակման համար նախատեսված ծրագրերով փորձագիտական հետազոտությունների իրականացում: Նշենք նաև, որ տվյալ սարքերի ձեռքբերման համար Կազմակերպության մասնագետների կողմից «Leica Geosystems» ընկերության մասնագետների հետ համատեղ իրականացվել են ուսումնասիրություններ և փորձարկումներ՝ արդի սարքավորումների կիրառելիության հնարավորությունների դիտարկման նպատակով: Հայաստանի Հանրապետությունում դատափորձագիտական բնագավառում տվյալ սարքերի և բացառիկ մշակված արդիական մեթոդիկայի կիրառումը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ իրականացնել հետազոտական աշխատանքները, կրճատելով փորձաքննությունների իրականացման ընթացքը և ստանալ գիտականորեն հիմնավորված և հավաստի արդյունքներ:

Կարևոր է արձանագրել, որ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կողմից Հայաստանի Հանրապետության դատափորձագիտական բնագավառում առաջին անգամ՝ 2019 թվականից սկսվել և ակտիվորեն իրականացվում են հետազոտական աշխատանքներ «PC Crash» համակարգչային ծրագրի և VZM 300 դեսելեքտոր սարքի կիրառմամբ: «PC Crash» համակարգչային ծրագիրը հնարավորություն է տալիս իրականացնել օբյեկտիվ հետազոտություն՝ կատարելով մաթեմատիկական մոդելավորում, որն ուղղորդվում է 3D մոդելավորմամբ և թույլ է տալիս ստանալ օբյեկտիվ տեղեկատվություն ճանապարհատրանսպորտային պատահարին նախորդող և բուն ընթացքում իրադրության զարգացման՝ վթարի մեխանիզմի վերաբերյալ: Մասնավորապես՝ ծրագրի օգնությամբ հնարավոր է իրականացնել ՃՏՊ մեխանիզմի վերլուծություն առաջնային և հաջորդող ընդհատումների մոդելավորում ավտոմատ ռեժիմով, ավտոտրանսպորտային միջոցի թափառքի հաշվարկ՝ հիմնվելով շարժիչի իրական բնութագրերի և օդի հոսքի դիմադրության վրա, ավտոտրանսպորտային միջոցի արգելակային ուժերի տեղաբաշխման բնութագրերի օգտագործում դինամիկական հաշվարկում, առաջադրված ճանապարհատրանսպորտային միջոցի շարժման ընթացքում բախման պահից սկսած վարորդի և ուղևորների տեղաշարժի մաթեմատիկական մոդելի օգտագործում, հաշվարկված արդյունքների ներկայացում տեքստի և դիագրամաների տեսքով, տրանսպորտային միջոցների և այլ օբյեկտների երկչափ և եռաչափ նկարների օգտագործման հնարավորություն, 3D ձևաչափով մոդելավորման ներկայացման հնարավորություն, ՃՏՊ մեխանիզմի մոդելավորման կազմում և այլն: «PC Crash» համակարգչային ծրագրի ներդրման ուղղությամբ Կազմակերպությունը համագործակցության շրջանակներում Դատափորձագիտական ինստիտուտների եվրոպական ցանցի (ENFSI) «ՃՏՊ հետազոտություն» աշխատանքային խմբի ղեկավար Ֆլորին Բուշիտոռուի հետ իրականացրել է մի շարք քննարկումներ և համատեղ աշխատանքներ նաև Կազմակերպության կողմից կազմակերպված միջազգային գիտաժողովի շրջանակներում (ս.թ. սեպտեմբերի 26-ից 27-ը) «PC Crash» համակարգչային ծրագրի կիրառման առանձնահատկությունների, իրականացվող այլ հետազոտությունների մեթոդների և ընթացակարգերի վերաբերյալ: «VZM 300» դեսելեքտոր սարքը հնարավորություն է տալիս ճանապարհատրանսպորտային

պատահարների վայրում դատական փորձաքննություններ իրականացնելիս հետազոտել և պարզել տրանսպորտային միջոցի արգելակման ուղու երկարությունը, ստանալ օբյեկտիվ տեղեկություն արգելակման ընթացքում անցած տարածության վերաբերյալ, ինչպես նաև իրականացնել տրանսպորտային միջոցի արգելակման փորձարկում, մասնավորապես՝ դանդաղեցման աճի նորմատիվային գրանցում և արգելակման երկարության չափում: Հարկ է նշել նաև, որ «PC Crash» համակարգչային ծրագրի շահագործման նպատակով Կազմակերպության տվյալ բնագավառի հետազոտություններ իրականացնող բոլոր փորձագետներն անցել են համապատասխան վերապատրաստում՝ Վիլնյուսի ավտոտեխնիկ-փորձագետ, տեխնիկական գիտությունների թեկնածու Վալենտին Միտունյավիչուսի ղեկավարությամբ: Հաշվետու ժամանակահատվածի երկրորդ կիսամյակի ընթացքում վերը նշված «PC Crash» համակարգչային ծրագրի կիրառմամբ Կազմակերպության ՃՏՊ հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի և տրանսպորտային հետքաբանական փորձաքննությունների բաժնում արդեն իսկ փորձաքննություններն իրականացվում են փորձագիտական հետազոտությունների ժամանակակից գիտական պատկերացումներին համապատասխան նորարարական մեթոդի կիրառմամբ՝ ապահովելով տվյալ բնագավառի փորձագիտական արդյունքների բարձր հավաստիությունը:

Հարկ է նաև նշել, որ հաշվետու ժամանակահատվածում համագործակցության մասին պայմանագրեր և հուշագրեր են ստորագրվել միջազգային գործընկեր դատափորձագիտական կառույցների հետ, այդ թվում՝ Ռուսիայի փորձագիտական ազգային ինստիտուտի, Մոլդովայի արդարադատության նախարարության դատական փորձաքննության ազգային կենտրոնի, Ուկրաինայի արդարադատության նախարարության Կիևի դատական փորձաքննությունների գիտահետազոտական ինստիտուտի, Ռուսաստանի Դաշնության «Առողջ անտառ» փայտանյութի փորձաքննությունների կենտրոնի, Մոլդովայի ներքին գործերի նախարարության ոստիկանության գլխավոր տեսչության փորձագիտական կենտրոնի, Լեհաստանի ոստիկանության դատափորձագիտական կենտրոնական լաբորատորիայի, Ղազախստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական փորձաքննությունների կենտրոնի, Ուկրաինայի արդարադատության նախարարության մտավոր սեփականության օբյեկտների դատական փորձաքննությունների հարցերով գիտահետազոտական կենտրոնի, Ուկրաինայի արդարադատության նախարարության Օդեսայի դատական փորձաքննությունների գիտահետազոտական ինստիտուտի և Փորձաքննությունների ազգային բյուրոյի միջև, որոնց հիման վրա իրականացվող աշխատանքները ունեն կարևոր նշանակություն միջազգային դատափորձագիտական տիրույթում ոլորտի ինտեգրման և ՀՀ-ում դատական փորձագիտության շարունակական կայուն զարգացման ապահովման համար:

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետները 2018 թվականից սկսած մասնակցում են Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության փորձի փոխանակման ծրագրին (CEPOL), որը բաղկացած էր երկու փուլից: Ծրագրի նպատակն է դատական փորձաքննությունների բնագավառում փոխանակվել տարիների ընթացքում ձեռքբերված լավագույն փորձով, հնարավորություններով, կիրառվող մեթոդներով և տեխնոլոգիաներով, ինչպես նաև ծանոթանալ իրականացվող ծրագրերին, ձեռքբերումներին, փորձագիտական ընթացակարգերին, փորձագիտության բնագավառի գործունեության կանոնակարգման օրենսդրական դաշտին, գործող նորմատիվ իրավական կարգավորումներին, իրականացվող փորձաքննությունների տեսակներին,

ենթատեսակներին, գիտահետազոտական աշխատանքներին և ոլորտին առնչվող երկու երկրներում գործող նորմատիվային իրավական բազաներին, ինչպես նաև իրականացնել գիտական համատեղ ծրագրեր: 2018 թվականին Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության փորձի փոխանակման ծրագիրն իրականացվել է ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի և Լատվիայի Հանրապետության պետական ոստիկանության դատական փորձաքննությունների փորձագետների միջև, իսկ 2019 թվականին վերը նշված ծրագիրն Կազմակերպության և Կիևի դատական փորձագիտության գիտահետազոտական ինստիտուտի փորձագետների միջև, ինչպես նաև 2021-2022 թվականներին իրականացվել է Ուկրաինայի արդարադատության նախարարության պրոֆեսոր Ն.Ս.Բոկարիուսի անվան Խարկովի դատական փորձաքննությունների գիտահետազոտական ինստիտուտի և Կիևի դատական փորձագիտության գիտահետազոտական ինստիտուտի փորձագետների հետ համատեղ: 2022 թվականին Եվրոպական Միության իրավապահ մարմինների ուսուցման գործակալության փորձի փոխանակման ծրագիրը նախատեսվում է իրականացնել Բելառուսի Հանրապետության պետական դատական փորձաքննության կոմիտեի և Վրաստանի Լևան Սամխարաուլի անվան ազգային քրեափորձագիտական բյուրոյի փորձագետների միջև:

Հայաստանի Հանրապետության դատափորձագիտական ոլորտի զարգացման և հնարավորությունների արդիականացման համար Կազմակերպությունը նախատեսում է 2022-2024 թվականներին իրականացնել ստորև ներկայացված աշխատանքները.

- ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի ԴՆԹ-նույնականացման բաժանմունքի փորձագիտական աշխատանքների մեկնարկի նպատակով Կազմակերպությունը մինչ օրս ակտիվ նախապատրաստական աշխատանքներ է իրականացրել այդ ոլորտում, Կազմակերպության դատագենետիկական փորձաքննությունների լաբորատորիան կահավորելով և մասնակի հագեցնելով անհրաժեշտ սարքավորումներով իր սեփական սուղ միջոցների հաշվին: Մասնավորապես, Կազմակերպության լաբորատորիան հագեցվել է համապատասխան կենսաբանական նմուշների նմուշառման, կենսաբանական նմուշից ԴՆԹ-ի անջատման, անջատված ԴՆԹ-ի քանակական չափման և ամպլիֆիկացման համար անհրաժեշտ լաբորատոր պարագաներով, ստերիլ աշխատանքի լամինար պահարաններով, հատուկ սառնարաններով, ՊՇՌ-ամպլիֆիկատոր AB7000 RT-PCR-ով և այլ պարագաներով, ինչպես նաև ձեռք են բերվել միկրոպիպետների տարբեր ծավալների հավաքածուներ, անալիտիկ լաբորատոր կշեռքներ, թերմո շեյքերներ, մասնագիտական գրականություն: Վերանորոգված են լաբորատոր սենյակները, որոնք համապատասխանեցվել են ԴՆԹ-նույնականացման լաբորատորիայի գործարկման համար անհրաժեշտ միջազգային չափանիշներին և պահանջներին: Համաձայն միջազգային ուղեցույցերի, ԴՆԹ-ի STR տիպավորումը ընդգրկում է մի շարք փուլեր (կենսաբանական նմուշի նմուշառումը, գենոմային ԴՆԹ-ի անջատումը և մաքրումը, գենոմային ԴՆԹ-ի քանակական չափումը, ամպլիֆիկացումը, սեկվենավորումը և այլն), որոնցից յուրաքանչյուրի համար պահանջվում է առանձին լաբորատոր սենյակներ՝ հագեցված անհրաժեշտ սարքավորումներով: Ինչպես վերը նշվեց Կազմակերպությունում առկա են նշված լաբորատոր տարածքները, որտեղ հնարավոր է իրականացնել ամբողջ շղթան: Կարևոր է արձանագրել, որ միջազգային ստանդարտներին համապատասխան անձի ԴՆԹ-նույնականացում իրականացնելու խնդրից բացի,

կարևոր գերակա խնդիր է հանդիսանում նաև ազգային ԴՆԹ տեղեկատվական բազայի ստեղծումը, որից հետո ԴՆԹ-նույնականացման արդյունքում ստացված ԴՆԹ-պրոֆիլները նույնպես կմուտքագրվեն և կպահպանվեն այդ բազայում: Ազգային ԴՆԹ-տեղեկատվական բազան իրենից ներկայացնում է տվյալ ազգի ԴՆԹ-պրոֆիլների բազա, որը պահպանվում է պետության/կառավարության կողմից ընտրված մարմնի կողմից: Յուրաքանչյուր ԴՆԹ պրոֆիլ ներկայացվում է STR լոկուսներով: Հիմնականում բազան օգտագործվում է դատաբժշկական նպատակներով, ներառյալ ռազմական հակամարտությունների զոհերի, ինչպես նաև հանցագործություն կատարած անձանց կամ կասկածյալների ԴՆԹ-պրոֆիլների որոնման և համեմատման համար: Հատուկ պետք է նաև նշել, որ ԴՆԹ-տեղեկատվական բազաների արդյունավետ ստեղծման, կիրառման և վերահսկման համար անհրաժեշտ է ապահովել համապատասխան նորմատիվային իրավական բազայի ձևավորումը: Վերը նշված աշխատանքների իրականացման համար «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի դատաբժշկական փորձաքննությունների բաժնի դատագենետիկական փորձաքննությունների բաժանմունքի լաբորատորիաներն անհրաժեշտ է համալրել որոշ սարքավորումներով, լիցենզավորված ծրագրային ապահովումներով, պարագաներով և նյութերով, որը հնարավորություն կընձեռի սկսել ԴՆԹ նույնականացման փորձաքննությունների կատարումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Հայաստանի Հանրապետության համար անհրաժեշտ և հրատապ հանդիսացող միջազգային ստանդարտներին համապատասխան դատագենետիկական նույնականացման ոլորտի փորձաքննությունների սկսման արդյունքում հնարավոր կլինի իրականացնել՝

- ✓ ռազմական հակամարտության զոհերի մարմինների հյուսվածքների (փափուկ հյուսվածքներ, ոսկրեր և այլն) նմուշների ԴՆԹ նույնականացում, ոսկրային հյուսվածքի դեպքում օրական միջինում 10 պիտանի նմուշների հաշվարկով, փափուկ հյուսվածքների դեպքում ավելի շատ,
- ✓ հանցագործություններ կատարած, այդ թվում կրկնահանցագործների արագ բացահայտում,
- ✓ որպես մեծ սփյուռք ունեցող երկիր, թույլ կտա բացահայտել անդրազգային հանցագործությունները և ունենալ ԴՆԹ-տվյալների ապացուցողական բազա, որով հնարավոր կլինի լուծել հանձնման/էքստրադիցիայի/ գործընթացների կարգավորման փաստաթղթաբանության հետ կապված խնդիրները,
- ✓ հնարավորություն կտա պահպանված իրեղեն ապացույցներով նորովի վերանայել ցմահ դատապարտված անձանց քրեական գործերը և այլն:

- Հայաստանի Հանրապետությունում դեռևս չեն իրականացվում պոլիգրաֆ սարքի կիրառմամբ դատահոգեֆիզիոլոգիական հետազոտություններ: Սարքը նախատեսված է մի շարք հոգեֆիզիոլոգիական ցուցանիշների միաժամանակյա արձանագրման համար, այդ թվում նաև անցյալում տեղի ունեցած երևույթների հետ կապված հիշողությունները ստուգելու, մարդու շնչառական, սիրտանոթային ակտիվության, մաշկի էլեկտրական դիմադրության և այլ ֆիզիոլոգիական տվյալները գրանցելու նպատակով, որոնք անհրաժեշտ են պարզելու համար անձի հաղորդած տեղեկությունների հավաստիությունը, ինչն ունի խիստ կարևոր նշանակություն հատկապես հակասական տվյալների առկայության և ապացուցողական այլ

տեղեկատվության ձեռքբերման անհնարինության դեպքերում՝ հանդիսանալով Հայաստանի Հանրապետությունում դատափորձագիտական ոլորտում դեռևս չկիրառվող, սակայն ինչպես ԱՊՀ, այնպես էլ եվրոպական մի շարք երկրներում և ԱՄՆ-ում լայն տարածում ստացած արդյունավետ կիրառում ունեցող հետազոտական մեթոդ: Տվյալ սարքը հնարավորություն է ընձեռում նաև բացահայտել և հայտնաբերել անձի հոգեբանական վիճակի առանձնահատկությունները կոնկրետ իրավիճակում, անձի ունեցած հոգեվիճակի վերաբերյալ ներկայացվող տվյալների հավաստիությունը և արժանահավատությունը մի շարք հանգամանքներում: Հաշվի առնելով «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում առկա մասնագիտական ներուժը՝ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ դատափորձագիտական ոլորտում՝ նաև գիտագործնական նպատակներով հոգեֆիզիոլոգիական հետազոտությունները կարող են իրականացվել նոր սերնդի լրակազմ պոլիգրաֆ սարքի ձեռքբերման պայմաններում, ինչպիսին հանդիսանում է Ռուսաստանի Դաշնությունում արտադրվող «Диана-07» վերջին սերնդի պոլիգրաֆ սարքը: Նախատեսվում է ձեռքբերել պոլիգրաֆ սարքը՝ ներդնելով համապատասխան մեթոդներով և մեթոդիկաներով, որոնց կիրառման միջոցով հնարավորություն կընձեռվի իրականացնել հոգեֆիզիոլոգիական հետազոտությունները:

- «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում ներկայումս իրականացվում են մարդու ձայնային խոսքի նույնականացման հետազոտություններ, ինչը հանդիսանում է արդիական և խիստ պահանջված հետազոտական ուղղություն, որի առումով հարկ է նշել, որ կատարված հետազոտությունների գիտականորեն հիմնավորված արդյունքների բարձր մակարդակի ապահովման համար անհրաժեշտ է տվյալ ոլորտում ներդնել կիրառելի վերջին սերնդի «SIS 11» ծրագիրը, որը հանդիսանում է նմանատիպ հետազոտությունների իրականացման համար նորարարական հնարավորություն՝ լայն կիրառում ունեցող ինչպես ԱՊՀ-ի, այնպես էլ եվրոպական երկրների առաջատար դատափորձագիտական գործընկեր կառույցներում: «SIS 11» ծրագիրը հնարավորություն է տալիս իրականացնել ստույգ վերլուծություններ և հետազոտություններ ձայնային ազդանշանի բոլոր պարամետրերի վերաբերյալ, հետազոտելի նմուշներում համանման բառերի որոնմամբ, համապատասխան ձայնագրային հատվածների առանձնացմամբ և այլն: Նախատեսվում է ձեռքբերել համապատասխան «SIS 11» ծրագիրը՝ ներդնելով համապատասխան մեթոդը, որի կիրառման միջոցով հնարավորություն կընձեռվի իրականացնել բազմակողմանի, լիարժեք փորձագիտական հետազոտություններ:

- Ներկայումս «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում իրականացվող դատափորձագիտական ոլորտի գիտագործնական և գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար կիրառվում են INL ծրագրի շրջանակներում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ին նվիրաբերված «MOTIK» մոդելի ստերեո մանրադիտակներ, որոնք համալրված չեն տեսանկարահանման հնարավորություններով: Կատարվող հետազոտական աշխատանքների համեմատական պատկերների արտացոլման ապացուցողական նշանակության և աշխատանքների արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջացել Կազմակերպության փորձագիտական հետազոտական առնվազն 4 լաբորատորիաների վերը նշված մանրադիտակները (յուրաքանչյուր լաբորատորիայում մեկական) համալրել համապատասխան տեսախցիկներով, որը հանդիսանում է կարևոր արդիական խնդիր՝ փորձագիտական աշխատանքների ստացված արդյունքների ապացուցողական նշանակության բարձրացման, թափանցիկության և մատչելիության

ապահովման համար: Տվյալ աշխատանքների արդյունավետ իրականացման համար նախատեսվում է իրագործել նշված ձեռքբերումները՝ փորձագիտական հետազոտությունների առավել բարձր արդյունքների ապահովման նպատակով:

«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը նախատեսում է նաև ձեռք բերել մասս-սպեկտրոմետրիկ քրոմատոգրաֆիական հետազոտական LC-MS/MS և GC-MS/MS վերջին սերնդի գերժամանակակից սարքավորումներ: Մասնավորապես՝ տոքսիկոլոգիական /թունաբանական/ փորձաքննությունների հետազոտական հնարավորությունների համալրման և ընդլայնման համար, ֆիզիկատեխնիկական հետազոտությունների և քիմիական /սյութագիտական/ փորձաքննությունների հետազոտական հնարավորությունների համալրման և ընդլայնման համար, սննդամթերքի և խմիչքների փորձաքննությունների հետազոտական հնարավորությունների համապատասխան մեթոդների և մեթոդիկաների, տվյալների շտեմարանների համար:

Նորարարական թարմացումների առումով աշխատանքներ են տարվում նաև այլ փորձագիտական ուղղություններով:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Դատական փորձաքննությունների ոլորտ, որի գործունեությունն առնչվում է դատական և իրավապահ ոլորտների գործունեության հետ, մասնավորապես ապահովելով քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից քրեադատավարական օրենսդրության շրջանակներում նշանակվող դատական փորձաքննությունների իրականացումը:

Հիմնական թիրախներն են՝ քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող դատական փորձաքննությունների պատշաճ իրականացմամբ համապատասխան պատշաճ որակի և դատավարական ու մեթոդական ընթացակարգերի պահպանմամբ ապացույցների ձեռք բերման միջոցով օժանդակել մինչդատական և դատական քրեական վարույթի իրականացմանը, ինչպես նաև անձի, հասարակության և պետության պաշտպանությանը հանցագործություններից:

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Դատական փորձաքննությունների իրականացում, որի գործունեությունն առնչվում է դատական և իրավապահ ոլորտների գործունեության հետ, մասնավորապես ապահովելով քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից քրեադատավարական օրենսդրության շրջանակներում նշանակվող դատական փորձաքննությունների իրականացումը:

Գերակա ծախսային ուղղությունները ժամանակահատվածի համար՝ (ըստ գերակայությունների նվազման)	ՄԺԾԾ (ըստ Հիմնավորումներ
Փորձաքննության ծառայություններ	ՀՀ քրեադատավարական օրենսդրության պահանջների կատարում

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1. Պարտադիր և հայեցողական ծախսերը

2020 և 2021 թվականների առաջին և երկրորդ ամիսների և 2021 թվականի ընթացքում պետական պատվերի շրջանակներում փաստացի իրականացված դատական փորձաքննությունների քանակական արդյունքների վերլուծության հիման վրա 2021 թվականի համար կատարված կանխատեսում.

Աղյուսակ N 2

Տարեթիվ	1-ին, 2-րդ ամիսներ կատարողականը (հատ)	3-12 ամիսների կատարողականը (հատ)	տարվա կատարողականը (հատ)
2020 թվական	1697	8944	10641
2021 թվական	1744	9194 (8944 x 1.028) (կանխատեսում)	10938 (կանխատեսում)
2021/2020 համեմատ աճի գործակից	1.028	1.028	

Սույն հաշվարկը հիմնված է պետական պատվերի շրջանակներում 2020 թվականի և 2021 թվականի առաջին և երկրորդ ամիսների ընթացքում փաստացի իրականացված դատական փորձաքննությունների քանակային ցուցանիշների համեմատական վերլուծության և փորձաքննությունների կատարման աճի միջինացված գործակիցի վրա:

Աղյուսակ N 3

Տարեթիվ	2021-2022թթ. Առաջին ամիսների կատարողականը /հատ /		2020թ. ամիսների միջև փաստացի կատարողականների համեմատական աճի միջին գործակիցը	2021թ. Առաջին և երկրորդ ամիսների կատարողականի գործակիցը 2020թ. Առաջին և երկրորդ ամիսների համեմատ	2021թ. հունվարի 1-ից մինչև 2021թ. փետրվարի 28-ը ժամանակահատվածում ամիսների կատարողականների աճի միջինացված գործակից	փետրվարից մինչև տարվեջ կատարողականը (հատ)՝ 2020թ. փաստացին և 2021թ. կանխատեսումը		տարվա կտրվածքով կատարողականը /հատ/2020թ. փաստացին և 2021թ. կանխատեսումը
	Առաջին և երկրորդ ամսվա	միջին ամսական				10 ամսվա	միջին ամսական	
2020թ	1697	848	1,11 (929/768, 1521/929, 782/1521, 918/782, 927/918, 775/927, 734/775, 852/734, 528/852, 641/528, 1266/641) / 11	1,028 (1744/1697)	1,069 (1,028 + 1,11)/2	9194	919	10641
2021թ	1744	872				9322 (1744 x 1,069 x 5) /կանխատեսում/	11066 (1744+9322) /կանխատեսում/	

2020 թվականի և 2021 թվականի ընթացքում պետական պատվերի շրջանակներում իրականացված դատական փորձաքննությունների քանակական արդյունքների վերլուծության հիման վրա 2021 թվականի համար կանխատեսումներ.

Աղյուսակ N 3-ից երևում է, որ 1,11 գործակիցը հանդիսանում է 2020 թվականի միմյանց հաջորդող ամիսների միջև փաստացի կատարողականների համեմատական

աճի միջին գործակիցը: 2021թ.-ի մարտից մինչև տարեվերջ կատարողականների քանակն առավել ճշգրիտ կանխատեսելու համար միջինացվել են նաև վերոնշյալ երկու գործակիցները, իսկ դրա արդյունքում ստացված 1,069 գործակիցը հանդիսանում է 2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի փետրվարի 28-ը ժամանակահատվածում արձանագրված՝ միմյանց հաջորդող ամիսների միջև աճի ցուցանիշների միջինացված գործակիցը (տես աղյուսակ N 4):

2021 թվականի 1-ին երկու ամիսների փաստացի կատարողականի նկատմամբ կիրառելով վերոնշյալ միջինացված գործակիցը (1,069) ստացվում է 2021 թվականի մարտից մինչև տարեվերջ կանխատեսվող փորձաքննությունների քանակը, որը կազմում է 9322 հատ:

Հարկ է նշել, որ 2021թ-ի համար փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը սահմանվել է 560 դրամ՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի, ինչպես նաև դրանից բխող Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N2215-Ն որոշման 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N79-Ն որոշման և դրանց հիման վրա «Փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2021թ-ի պետական պատվերի մասին» ՀՀ գլխավոր դատախազի 19.01.2021թ-ի թիվ 1 հրամանի:

Այսպիսով, վերոգրյալ իրավիճակային վերլուծությունից ելնելով, վերը նշված երկու աղյուսակներում տարբեր եղանակներով հաշվարկված և արտացոլված քանակների միջինացված ցուցանիշը ստացվում է՝ 9258 [(9194+9322):2] և հիմնավորվում է, որ 2021 թվականի մարտից մինչև տարեվերջ ընկած ժամանակահատվածում Կազմակերպությունում կանխատեսվում է իրականացնել 9258 դատական փորձաքննություններ (ըստ հետազոտելի օբյեկտների): 2021թ.-ի առաջին երկու ամիսների վերլուծությունը ցույց է տալիս, որ միջին ամսական փորձաքննությունների քանակը՝ ըստ կատարողականների, կազմում է շուրջ 872 (տես Աղյուսակ N3): Ելնելով որոշ տեսակներով նշանակվող դատական փորձաքննությունների ներկայումս նկատվող աճի միտումներից, ներկայումս վարույթում առկա փորձաքննությունների բարդ, համալիր, ժամանակատար և ծախսատար բնույթից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն վերջին տարիների վիճակագրական տվյալների յուրաքանչյուր տարվա վերջին երկու ամիսներին շուրջ 10%-ով ավելանում է նշանակվող փորձաքննությունների քանակը՝ կանխատեսվում է, որ նշված փորձաքննություններից (9322-ից) շուրջ 1100-ի (ըստ հետազոտելի օբյեկտների) կատարումն ընթացիկ տարեվերջին կտեղափոխվի 2022 թվական, արդյունքում 2021 թվականի մարտի 1-ից մինչև տարեվերջ կիրականացվի շուրջ 8222 (9322-1100) փորձաքննություններ (ըստ հետազոտելի օբյեկտների):

Նկատի ունենալով, որ տարբեր փորձաքննությունների կատարման ծառայությունների միավորի գները տարբեր են՝ 8222 փորձաքննությունների կատարման ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարի չափը հաշվարկելու համար օգտվենք մեկ փորձաքննության կատարման ծառայության միջին գնից՝

$$Q_u = \frac{Q_{\phi}}{\Phi_{\phi}} \times \Phi_{u. \text{ը}} \times U_{z\phi}$$

որտեղ՝

$Q_u = 2021$ թվականի մարտի 1-ից մինչև տարեվերջ փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման անհրաժեշտ գումարն է:

$Q_{\phi} = 59716.16$ ՝ մինչ 2021 թվականի մարտի 1-ը պետական պատվերի շրջանակներում կատարված փորձաքննությունների գինն է հազար դրամներով (տես աղյուսակ N 4):

$\Phi_{\phi} = 1744$ ՝ մինչ 2021 թվականի մարտի 1-ը պետական պատվերի շրջանակներում կատարված փորձաքննությունների քանակն է (տես աղյուսակ N 4):

$\Phi_{u. \text{ը}} = 8222$ ՝ 2021 թվականի մարտի 1-ից մինչև տարեվերջ ավարտվելիք փորձաքննությունների կանխատեսվող քանակն է:

$U_{z\phi} = 1.2$ ՝ վիճակագրական տվյալներից բխող գործակից է, որը հաշվի է առնում 2021 թվականի մարտի 1-ից մինչև տարեվերջ ավարտվելիք փորձաքննությունների քանակը, որոնց իրականացման արդյունքում առաջադրված հարցերը պարզաբանում չեն ստանա:

Բանաձևում տեղադրելով համապատասխան արժեքները՝ ստացվում է

$$Q_u = \frac{59716.16}{1744} \times 8222 \times 1,2 = 337834.59 \text{ հազ.դրամ}$$

Այսպիսով, 2020 թվականի կտրվածքով մեր կանխատեսումները կկազմեն թվով 9966 (1744 + 8222) փորձաքննությունների կատարման ծառայություններ՝ գումարային արտահայտությամբ շուրջ 397327.06 հազար դրամի չափով (59716.16 + 337834.59 = 397550.75):

Գնահատելով վերոնշյալ վերլուծությամբ ստացված արդյունքներն ակնհայտ է դառնում, որ 2021 թվականի ընթացքում տարեկան կտրվածքով պետական պատվերի շրջանակներում հիմնավոր կանխատեսվում է թվով շուրջ 9966 դատական փորձաքննությունների իրականացում՝ գումարային արտահայտմամբ 397550.75 հազար դրամի չափով, ինչը հաշվի առնելով 2021 թվականին տեղադրված պետական պատվերի ծավալը, անհրաժեշտություն կառաջացնի ՀՀ պետական բյուջեից լրացուցիչ միջոցների հատկացման շուրջ 62260.15 հազար դրամի չափով (397550.75 – 335290.6):

ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ում
 2021 թվականի հունվար և փետրվար ամիսների ընթացքում պետական պատվերի շրջանակներում
 իրականացված դատական փորձաքննությունները

N	Կատարված աշխատանքների համառոտ նկարագիրը	Միավոր արժեքը /դրամ/	հ ու ն վ ար		փ ե տր վ ար		ը նդամենը 2021 թ հունվար, փետրվար ամիսներ	
			ք ան ակ	գ ու ն ար	ք ան ակ	գ ու ն ար	ք ան ակ	գ ու ն ար
1	Ձեռագրաբանական	25200	1	25.2	33	831.6	34	856.8
2	Փաստաթղթաբանական	33600	10	336.0	296	9945.6	306	10281.6
3	Հեղինակային	25200						
4	Ֆոտոտեխնիկական	50400	0	0.0	2	100.8	2	100.8
5	Դիմանկարային	50400	9	453.6	8	403.2	17	856.8
6	Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման	67200	14	940.8	6	403.2	20	1344.0
7	Հետքաբանական	25200	46	1159.2	104	2620.8	150	3780.0
8	Ձգաբանական	33600	46	1545.6	26	873.6	72	2419.2
9	Պայթյունատեխնիկական	50400	20	1008.0	14	705.6	34	1713.6
10	Նյութագիտական	33600	58	1948.8	108	3628.8	166	5577.6
11	Սննդային	33600	3	100.8	82	2755.2	85	2856.0
12	Կենսաբանական /հողագիտական/	33600	70	2352.0	248	8332.8	318	10684.8
13	Հրդեհատեխնիկական	50400	6	302.4	13	655.2	19	957.6
14	Շինարարատեխնիկական	33600	18	604.8	70	2352.0	88	2956.8
15	ՃՏՊ հանգամանքների	16800	7	117.6	15	252.0	22	369.6
16	SU տեխնիկական վիճակի	50400	3	151.2	6	302.4	9	453.6
17	Տրանսպորտային հետքաբանական	50400	4	201.6	3	151.2	7	352.8
18	Տնտեսագիտական, հաշվապահական	100800	0	0.0	3	302.4	3	302.4
19	Ապրանքագիտական	16800	44	739.2	126	2116.8	170	2856.0
20	Համակարգչատեխնիկական	84000	10	840.0	12	1008.0	22	1848.0
21	Մշակութային արժեքների	67200	3	201.6	3	201.6	6	403.2
22	Ճարտարագիտատեխնիկական	84000	5	420.0	5	420.0	10	840.0
23	Լինզվիստիկական	85680						
24	Հոգեբանական	85680	2	171.4	9	771.12	11	942.48
25	Դատաբժշկական	69440	43	2985.9	36	2499.84	79	5485.76
26	Դատաքիմիական/թունաբանական/	11760	24	282.2	53	623.3	77	905.5
27	Դատագենետիկական (ԴՆԹ նույնականացման)	145600						
28	Օդորոլոգիական/այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի	33600						
29	Էկոլոգիական	33600	0	0.0	17	571.2	17	571.2
	Ը նդամենը		446	16887.9	1298	42828.26	1744	59716.16

Մինչ 2022թ.-ի համար նախատեսված հաշվարկների իրականացումը, հարկ է նշել, որ 2022թ.-ին նախատեսվում է կատարել դատափորձագիտական բնագավառի աշխատողների աշխատավարձի բարձրացում առնվազն 30%-ի չափով, իսկ անհրաժեշտ այլ ծախսերի կատարումը, որոնք անհրաժեշտ են փորձաքննությունների իրականացման շարունակական պատշաճ ընթացքն ապահովելու համար, կպահանջվի հատկացվող գումարի չափի ավելացում նախորդ ժամանակահատվածի համեմատ շուրջ 20%-ի չափով: Այն պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ նախորդ տարիների ընթացքում երկրում տեղի ունեցած գնաճով, հնարավոր կոռուպցիոն ռիսկերից խուսափելու անհրաժեշտությամբ, որը հանդիսանում է Կառավարության ռազմավարության կարևորագույն խնդիրներից մեկը, կազմակերպությունում աշխատող և 2021 թվականի ընթացքում նախատեսվող փորձագիտական ստորաբաժանումների հզորությունների զարգացման համար անհրաժեշտ մասնագիտացում և փորձ ունեցող փորձագետներով համալրման և արդեն իսկ գործունեություն ծավալող մի շարք փորձագետների նեղ մասնագիտացման անհրաժեշտությամբ՝ ըստ փորձաքննությունների բնույթի և առանձանահատկությունների, *ինչպես նաև հաշվի առնելով ՀՀ կառավարության որդեգրած քաղաքականությունը, որը նախատեսում է հանրային հարվածի ծառայողների վարձատրության բարձրացում՝ աշխատաշուկայում մրցունակ աշխատավարձի ձևավորման նպատակով:*

Հարկ է նշել, որ 2021թ.-ի համար «Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի, ինչպես նաև դրանից բխող Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի N2215-Ն որոշման 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Փորձաքննությունների կատարման ծառայության նախահաշվային արժեքի մասին» N79-Ն որոշման և դրանց հիման վրա «Փորձաքննությունների կատարման ծառայությունների ձեռքբերման գծով 2021թ.-ի պետական պատվերի մասին» ՀՀ գլխավոր դատախազի 19.01.2021թ.-ի թիվ 1 հրամանի համաձայն փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը սահմանված է 560 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը՝ 93.35 դրամ, այսինքն, փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը՝ առանց ավելացված արժեքի հարկի կազմում է 467 դրամ, որի պայմաններում փորձագետների ամսեկան հաշվարկային աշխատավարձին բաժին ընկնող չափը միջինում կազմում է շուրջ 150000 դրամ, իսկ ամսեկան զուտ աշխատավարձի չափը՝ շուրջ 110250 դրամ ($150000 \times 22\% \times 3.5\% - 1500$ դրամ): Նշված աշխատավարձի բարձրացման և մյուս անհրաժեշտ ծավալի իրագործմանն ուղղված վերոգրյալ նպատակների իրականացման համար արժեքի շուրջ 50%-ով բարձրացման պարագայում վերջինս կկազմի շուրջ 700 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի ($467 \times 50\% + 467$), որին ավելացնելով նաև ավելացված արժեքի հարկի գումարը 20%-ի չափով ($700 \times 20\%$) փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը կկազմի 840 ($700 + 140$) դրամ, որով հնարավոր կլինի 2022թ.-ից ձևավորել դատական փորձագետների համեմատաբար մրցունակ վարձատրության չափ, ինչպես նաև ապահովել ոլորտի բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ հատկապես պարտադիր ծախսերի իրականացումն ու փորձագիտական աշխատանքների շարունակական ընթացքը՝ արդյունքում ապահովելով ոլորտի շարունակական կայուն զարգացումը՝ հնարավորինս խուսափելով բարձր որակավորում ունեցող կադրերի արտահոսքից:

Այսպիսով, հիմք ընդունելով ներկայացված հաշվարկները, նախորդ տարիների և 2021 թվականի առաջին երկու ամիսների ընթացքում իրականացված փորձագիտական ծառայությունների ընդլայնումը, ինչպես նաև 2020-2021 թվականների ընթացքում արդեն

իսկ տեղ գտած առանձին ուղղություններով որոշակի քանակական աճը, սույն հայտով 2022 թվականի համար պահանջվում է 548990.4 հազար դրամի չափով բյուջետային ֆինանսավորում թվով 9966 դատական փորձաքննությունների կատարման համար (տես Աղյուսակ 5):

Պետք է նշել, որ 2022 թվականի ընթացքում Աղյուսակ 5-ում նշված փորձաքննությունները կատարվելու են ՀՀ օրենսդրությամբ և ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով սահմանված յուրաքանչյուր փորձաքննության տեսակի համար հաստատված փորձագիտական աշխատանքի նորմատիվային ժամաձախսերի և վերը նշված վերլուծությամբ ստացված 840 դրամ փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքի համաձայն:

Սույն ծրագրով 2022 թվականի համար նախատեսվող բյուջետային ֆինանսավորումն առաջարկվում է բաշխել ըստ եռամսյակների հավասար տոկոսաչափերով՝ յուրաքանչյուր եռամսյակում 25%-ի համամասնությամբ:

Ստորև ներկայացվում է 2022 թվականի ընթացքում ՀՀ դատախազության միջոցով տեղադրվող պետական պատվերի շրջանակներում «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ից ձեռք բերման համար նախատեսվող 9966 դատական (29 տեսակի) փորձաքննությունների նախահաշիվը.

Աղյուսակ N 5

	Փորձաքննության տեսակի նվազագույն արժեքը	Փորձագիտական աշխատանքի նորմատիվային ժամաձախսը /ժամ/	Փորձագիտական աշխատանքի 1ժամվա արժեքը /դրամ/	Փորձաքննությունների ամսական քանակը /դրամ/	Փորձաքննությունների նախատեսվող քանակը /հատ/	Ընդամենը /հազ.դրամ/
1	Ձեռագրաբանական	45	840	37800	574	21697.2
2	Փաստաթղթաբանական	60	840	50400	846	42638.4
3	Հեղինակային	45	840	37800	4	151.2
4	Ֆոտոտեխնիկական	90	840	75600	26	1965.6
5	Դիմանկարային	90	840	75600	34	2570.4
6	Տեսաձայնագրառման և աուդիոձայնագրառման	120	840	100800	235	23688.0
7	Հետքաբանական	45	840	37800	271	10243.8
8	Ձգաբանական	60	840	50400	296	14918.4
9	Պայթյունատեխնիկական	90	840	75600	94	7106.4
10	Նյութագիտական	60	840	50400	1481	74642.4
11	Սննդային	60	840	50400	112	5644.8
12	Կենսաբանական /հողագիտական/	60	840	50400	846	42638.4
13	Հրդեհատեխնիկական	90	840	75600	319	24116.4
14	Շինարարատեխնիկական	60	840	50400	342	17236.8
15	ՃՏՊ հանգամանքների	30	840	25200	296	7459.2
16	SU տեխնիկական վիճակի	90	840	75600	71	5367.6
17	Տրանսպորտային հետքաբանական	90	840	75600	116	8769.6
18	Տնտեսագիտական, հաշվապահական	180	840	151200	86	13003.2
19	Ապրանքագիտական	30	840	25200	1415	35658.0
20	Համակարգչատեխնիկական	150	840	126000	468	58968.0
21	Մշակութային արժեքների	120	840	100800	112	11289.6
22	Ճարտարագիտատեխնիկական	150	840	126000	168	21168.0

23	Լինգվիստիկական	153	840	128520	16	2056.3
24	Հոգեբանական	153	840	128520	146	18763.9
25	Դատաբժշկական	124	840	104160	549	57183.8
26	Դատաքիմիական/թունաբանական/	21	840	17640	1003	17692.9
27	Դատագենետիկական (ԴՆԹ նույնականացման)	260	840	218400	2	436.8
28	Օդորոլոգիական/այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի	60	840	50400	2	100.8
29	Էկոլոգիական	60	840	50400	36	1814.4
	Ը ն դ ա մ ե ն ը				9966	548990.4

Համաձայն վերը նշված համեմատականների և կանխատեսումների անհրաժեշտ է պետական բյուջեի 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով 2022 թվականի համար նախատեսել 548990.4 հազ. դրամ՝ հաշվի առնելով իրականացվող փորձագիտական ծառայությունների տեսականու (այդ թվում ենթատեսակների և տեխնոլոգիական ուղղությունների) տարեցտարի աստիճանաբար ընդլայնումը, 840 դրամ փորձագիտական աշխատանքի մեկ ժամվա նախահաշվային արժեքը և հիմնական ուղղություններով որոշակի քանակական աճը, ինչպես նաև փորձաքննությունների պատշաճ որակով և ժամկետներում կատարման ապահովման անհրաժեշտությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, և նախորդ տարիների ընթացքում իրականացված փորձագիտական ծառայությունների տեսականու որոշակի ընդլայնումը և 2019-2020 թվականների ընթացքում արդեն իսկ տեղ գտած զգալի քանակական աճը, 2022-2024 թվականների համար ձեռք բերվող դատական փորձաքննությունների գծով կանխատեսվում է 2022 թվականի համեմատ 2023 և 2024 թվականների համար տարեկան միջինում շուրջ 5%-ի չափով քանակական, հետևաբար և ֆինանսավորման աճ:

Համաձայն վերը նշված համեմատականների և կանխատեսումների անհրաժեշտ է պետական բյուջեի 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով (որը 2020 թվականի համար կազմել է 345286.48 հազ. դրամ, 2021 թվականի համար կազմել է 335290.6), 2022 թվականի համար նախատեսել 548990.4 հազ. դրամ, 2023 թվականի համար նախատեսել 576439.1 հազ. դրամ, իսկ 2024 թվականի համար՝ 605253.6 հազ. դրամ, ինչը, ինչպես արդեն նշվել է, ենթադրում է 2021 թվականի համեմատ միջին տարեկան շուրջ 5%-ի չափով աճ՝ հաշվի առնելով իրականացվող փորձագիտական ծառայությունների տեսականու (այդ թվում ենթատեսակների և տեխնոլոգիական ուղղությունների) տարեցտարի աստիճանաբար ընդլայնումը և որոշակի քանակական, հետևաբար և արժեքային աճը, ինչպես նաև տվյալ փորձաքննությունների կատարման պատշաճ որակի ապահովման անհրաժեշտությունը:

4.2. Գոյություն ունեցող ծախսային պարտավորությունները

Ելնելով վերոգրյալից՝ 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով 2022թ.-ի համար ֆինանսավորվող ծրագրով համամասնորեն ավելացումներ են նախատեսված տնտեսագիտական դասակարգման համապատասխան հոդվածներով:

Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ

2022 թվականի համար տվյալ հոդվածով աշխատավարձին և դրան հավասարեցված վճարներին նախատեսվում է հատկացնել 381855.7 հազար դրամ: Հաշվի առնելով, որ ներկայացվող ծրագրային հայտի համաձայն 2022 թվականի համար նախատեսվում է կատարվող դատական փորձաքննությունների արժեքների և քանակների որոշակի աճ 2021 թվականի կանխատեսվող համապատասխան ցուցանիշների նկատմամբ, ՀՀ ԳԱԱ նախագահի հետ համաձայնեցմամբ և «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կողմից 22.12.2020 թվականին հաստատված Կազմակերպության կառուցվածքային սխեմայով 229 հաստիքային միավորի սահմաններում 2021 թվականին նախատեսվում է փորձաքննությունների կազմակերպումն ու իրականացումն ապահովող աշխատակիցների 2021 թվականի հաստիքացուցակով նախատեսված թվաքանակի պահպանում: Նախատեսվող գումարը կապահովի անմիջականորեն փորձաքննությունների կատարմանը ներգրավված շուրջ 179 աշխատողների աշխատանքի վարձատրության որոշակի չափով բարձրացում, սակայն հարկ է նշել, որ տվյալ գումարը չի ապահովում փորձաքննությունների հետ առնչվող անձնակազմի աշխատանքի դիմաց լիարժեք վարձատրությունը, այն է՝

2022 թվականի ընթացքում նախատեսվում է փորձագիտական ստորաբաժանումների հզորությունների ավելացման և զարգացման համար անհրաժեշտ մասնագիտացում և փորձ ունեցող փորձագետներով համալրում, մասնագետների, առկա սոցիալ-տնտեսական իրավիճակի պայմաններում ինչպես վերը նշվեց փորձագետների վարձատրության չափի որոշակի ավելացում, չնայած այն հանգամանքին, որ ավելացման արդյունքում վերջիններիս միջին աշխատավարձն այնուամենայնիվ ավելի ցածր կլինի, քան Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք փորձագիտական կառույցներում, հատկապես մասնավոր և հարևան երկրների նմանատիպ կառույցներում, ինչպես նաև որոշ պետական մարմիններում աշխատող փորձագետների միջին աշխատավարձերի համեմատ: Տվյալ տեսանկյունից կարևոր է նաև նշել, որ աշխատակիցներին պատշաճ վարձատրություն ապահովելու նպատակով 2022 թվականի համար տվյալ ծրագրով նախատեսված ֆինանսավորման գերակշիռ մասը կնպատակաուղղվի աշխատավարձի ֆոնդին:

Հարկ է նշել, որ նախատեսվող 381855.7 հազար դրամ գումարից պետական բյուջե վճարվելու է շուրջ 106991.2 հազար դրամի չափով եկամտային հարկ, սոցիալական և դրոշմանիշային վճարներ:

Ապրանքների և նյութերի ձեռքբերում

Տվյալ հոդվածով 2022 թվականի համար նախատեսվում է հատկացնել 32662.8 հազար դրամ՝ հաշվի առնելով փորձագիտական ծառայությունների ծավալների որոշակի աճը և նրանց արդյունավետ իրականացման համար ձեռք բերվելիք անհրաժեշտ ապրանքների և նյութերի գնաճը: Հարկ է նշել, որ ինչպես փորձագիտական աշխատանքների կազմակերպման և իրականացման (ըստ ժամանակակից տեխնոլոգիական պահանջների), այնպես էլ վերջիններիս արդյունավետությունը և պատշաճ որակն ապահովող համապատասխան գիտագործնական աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ է մշտապես հագեցնել Կազմակերպության փորձագիտական (մասնագիտացված) ստորաբաժանումները՝ հատկապես կապված 2022 թվականի ընթացքում վերջիններիս հզորությունների զարգացման հետ համապատասխան գույքով, սարք-սարքավորումներով, անխափան ապահովելով վերջիններս ստանդարտ նյութերով, էտալոնային նմուշներով, քիմիական ռեակտիվներով, ախտորոշիչ շիճուկներով, դեղանյութերով, տեխնիկական և բժշկական նշանակության պարագաներով, ֆոտոթղթով, ռենտգեն, ֆոտո-տեսաձայնագրային և այլ ժապավեններով, սկավառակներով,

համակարգչային տպիչների քարտիջներով և ներկերով, թղթով և գրասենյակային ապրանքներով և այլ նյութերով: Հատուկ պետք է նշել, որ սույն հոդվածով նախատեսված գումարով բնականաբար հնարավոր կլինի ձեռք բերել վերը նշված ապրանքների տեսականին միայն նվազագույն քանակություններով: Նշված ապրանքներից ձեռք կբերվեն նաև «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ը ֆինանսավորող այլ ծրագրերով՝ մասնավորապես գիտության բազային ֆինանսավորմանը վերաբերող, պայմանագրային (ձեռնարկատիրական գործունեության արդյունքում ստացվող եկամուտների հաշվին) և այլ, նամանավանդ, որ թվարկված արժեքների գրեթե ողջ տեսականին օգտագործվում է փորձաքննությունների կատարմանն անմիջականորեն վերաբերող գիտագործնական աշխատանքների ընթացքում: Նշված ապրանքատեսակների ձեռք բերումը Կազմակերպության կողմից կիրականացվի «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումների գործընթացը կանոնակարգող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Կոմունալ ծառայությունների վճարներ

2021 թվականի համար տվյալ հոդվածով նախատեսվում է հատկացնել 11587.4 հազար դրամ, որը ներառում է ջեռուցման ծախսը բնական գազի միջոցով, էլեկտրաէներգիայի՝ կապված լուսավորության, փորձաքննությունների կատարմանն առնչվող համակարգչային տեխնիկայի և լաբորատոր սարքավորումների շահագործման հետ, ինչպես նաև ջրի ծախսը՝ կապված լաբորատոր աշխատանքների ծավալների հետ: Բնականաբար հոդվածում նշված գումարը կարող է ընդամենը մասնակիորեն ծածկել Կազմակերպության ծախսերն այդ ուղղություններով, վերջիններիս որոշ մասը նախատեսվում է ծախսաձածկել նաև այլ ֆինանսական ծախսային ծրագրերով:

Կապի ծառայության ծախսեր

2022 թվականի համար սույն հոդվածով նախատեսվում է հատկացնել 2616.8 հազ. դրամ: Նշված գումարը հաշվարկելիս հաշվի է առնվել Կազմակերպության երկու մասնաշենքերի և ախտաբանական կենտրոնի մասնաշենքում գործող հեռախոսակետերի քանակը, ինչպես նաև տեղադրված համապատասխան արագությամբ ինտերնետային համակարգը, որն ուղղակիորեն ապահովում է Կազմակերպության բնականոն աշխատանքը, հատկապես հաշվի առնելով նաև համակարգչատեխնիկական փորձաքննությունների բաժնի կողմից ցանցային հանցագործությունների զծով իրականացվող փորձաքննությունների կարողությունների պատշաճ ապահովման անհրաժեշտությունը: Պետք է նշել, որ նախատեսված գումարը կարող է ապահովել միայն վերոնշված ինտերնետային ծառայությունների ձեռքբերումը և փորձաքննությունների իրականացման ապահովման հետ կապված հեռախոսակապից օգտվելու չափաքանակի մասնակի ծախսաձածկումը: Հատուկ պետք է նշել, որ ֆիքսված /քաղաքային/ հեռախոսակապի ամսական բաժանորդային վճարը և ծառայողական նպատակներով միջքաղաքային, միջազգային և տեղական ելից խոսակցությունների վարձավճարները հաշվարկվել են ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 30-ի N 1956-Ն որոշմամբ սահմանված սահմանաչափերի շրջանակներում:

Գործուղման ծախսեր

2022 թվականին Կազմակերպության կողմից իրականացվող փորձաքննությունների տեսականու և հատկապես քանակների կանխատեսվող աճից ելնելով, նախատեսվում է նաև փորձագետների ներքին գործուղումների քանակների զգալի ավելացում նախևառաջ

ՀՀ մարզեր և ԱՀ՝ դատական նիստերին մասնակցությունների և իրականացվող փորձաքննությունների համար անհրաժեշտ ելակետային տվյալների ձեռքբերման և փորձագիտական հետազոտությունների իրականացման հետ կապված, ինչպես նաև նոր ուղղությունների զարգացման ապահովման առումով արտասահմանյան գործուղումների նվազագույն քանակի ապահովում, որի կապակցությամբ, նախատեսվում են գործուղումներ ինչպես ԱՊՀ երկրներում, այնպես էլ որոշ եվրոպական երկրներում կազմակերպվող գիտագործնական սեմինարներին, համաժողովներին, գիտաժողովներին, հատկապես վերապատրաստման և նեղ մասնագիտացման (կատարելագործման) դասընթացներին Կազմակերպության համապատասխան աշխատակիցների մասնակցությունների հետ կապված (հատկապես կապված նոր փորձագիտական ուղղությունների ուսումնասիրման և ներդրման հետ): Նշված նպատակներն իրականացնելու համար նշված հոդվածով տվյալ ծախսային ծրագրով 2022 թվականի համար նախատեսվում է 5831.4 հազար դրամ, որի ծախսերն իրականացվելու են ՀՀ Կառավարության 29.12.2005թ-ի N 2335-Ն որոշուման պահանջների համաձայն: Սակայն հարկ է նշել, որ տվյալ հոդվածում նշված գումարը կարող է ընդամենը մասնակի ծածկել Կազմակերպության ծախսերը ներքին գործուղումների մասով, իսկ ծախսերի որոշ մասը նախատեսվում է ծախսաձածկել նաև այլ ֆինանսական ծախսային ծրագրերով:

Այլ ծախսեր

Տնտեսագիտական դասակարգման տվյալ հոդվածով գումարը նախատեսելիս հաշվի են առնվել Կազմակերպության սարքավորումների պարտադիր ամենամյա ստուգաչափման, համակարգչային տեխնիկայի սպասարկման, սուրհանդակային կապի, ISO և միջազգային այլ ստանդարտների և համակարգերի գծով փորձագիտական գործունեության հավատարմագրման համար խորհրդատվական, վերապատրաստման և նեղ մասնագիտացման (կատարելագործման) ուսուցման ծառայությունների ձեռքբերումները, ինչպես նաև հատուկ, թանկարժեք սարքավորումների բացակայության պատճառով որոշ փորձաքննությունների իրականացման ապահովման նպատակով այլ մասնագիտացված կառույցներից /որոնք ունեն հանրապետությունում եզակի, առանձնակի, թանկարժեք, ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարքավորումներ/ պահանջվող հետազոտությունների ձեռքբերումը, ինչպես նաև հյուսվածքաբանական փորձաքննությունների իրականացման ապահովման նպատակով հյուսվածքաբանաքիմիական փորձաքննությունների բաժանմունքի (ներառյալ ախտաբանական կենտրոնի) համար վարձակալած տարածքի վարձավճարները և մի շարք այլ ծախսեր: Նշված հոդվածով 2022 թվականի համար նախատեսվում է հատկացնել 11532.6 հազար դրամ: Նախատեսված գումարը բնականաբար միայն կարող է մասնակիորեն ծածկել վերոնշյալ և Կազմակերպության կողմից փորձաքննությունների կատարման հետ առնչվող անհրաժեշտ ծախսերը, ինչպես նաև ապահովել մի շարք այլ ծառայությունների ձեռքբերումը:

Կապիտալ ծախսեր (գույք, սարք-սարքավորումներ, ոչ նյութական ակտիվներ)

Նախատեսվում է 2022 թվականի համար նվազագույնը 21964.2 հազար դրամի սահմաններում կապիտալ ակտիվների ձեռքբերումը՝ լիցենզիաների, սերտիֆիկատների, համակարգչային նոր ծրագրերի, որոշ գրասենյակային գույքի և համակարգչային տեխնիկայի, հատուկ մասնագիտական սարքեր-սարքավորումների, դրանց կոմպլեկտավորող մասերի և այլն, որոնք անմիջականորեն նպատակաուղղված են փորձաքննությունների իրականացմանը: Հարկ է նշել, որ Կազմակերպության փորձագիտական բաժինները և լաբորատորիաները համապատասխան գույքով և որոշ

խիստ անհրաժեշտ սարք-սարքավորումներով (որոնց տրամադրումը նախատեսված չի եղել հայ-ամերիկյան համագործակցության INL ծրագրով) համալրելու և Կազմակերպության անխափան գործունեությունն ապահովելու նպատակով կպահանջվեն համապատասխան միջոցներ ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ ծախսերի գծով: Այդպիսիք խիստ անհրաժեշտ են, քանի որ համաձայն վերոնշյալ համագործակցության մասին համաձայնագրի, ԱՄՆ-ի կառավարությունը մինչ 2018 թվականն աջակցել է և ներկայումս բանակցություններ են տարվում ամերիկյան կողմի հետ շարունակելու աջակցել որոշ ուղղվածություն ունեցող, հիմնականում անդրազգային հանցավորության դեմ պայքարի ծրագրերում առանցքային նշանակություն ունեցող մի քանի լաբորատորիաների հագեցվածության ապահովմանը՝ հիմնականում բարձրակարգ, ժամանակակից տեխնոլոգիական և առավել թանկարժեք սարքավորումներով: Նշված ձեռքբերումները կատարվելու են «Գնումների մասին» ՀՀ օրենքով և գնումների գործընթացը կանոնակարգող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով նախատեսված ընթացակարգերով: Բնականաբար սույն հոդվածով նախատեսված գումարը չի կարող ծածկել Կազմակերպության բոլոր անհրաժեշտ ծախսերը տվյալ ուղղություններով և վերջիններիս որոշ մասը նախատեսվում է նաև ծախսաձածկել այլ ֆինանսական ծախսային ծրագրերով:

Հարկեր (պետական բյուջեին կապարվող վճարումներ)

2022թ.-ի համար տնտեսագիտական դասակարգման հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ հոդվածով նախատեսվում է 80939.5 հազար դրամ:

Վերոգրյալից ելնելով հարկ է նշել, որ փորձագիտական ծառայությունների ձեռք բերման համար 2022 թվականին նախատեսված 548990.4 հազար դրամ գումարից ՀՀ պետական բյուջե, հիմնականում ավելացված արժեքի հարկի և եկամտային հարկի գծով, ետ է վերադարձվում ընդհանուր 187930.7 հազար դրամ՝ ընդհանուր գումարի շուրջ 34%-ը: Վերոգրյալ մյուս հատկացումների համար բաժին է ընկնում 361059.7 (548990.4 -187930.7) հազար դրամ:

Ելնելով վերոգրյալից՝ 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով համամասն ավելացումներ են նախատեսված տնտեսագիտական դասակարգման համապատասխան հոդվածներով:

Աշխատավարձ և աշխատավարձին հավասարեցված այլ վճարները կկազմեն համապատասխանաբար 2022 թվականին՝ շուրջ 381855.7 հազ.դրամ, 2023 թվականին՝ շուրջ 400948.5 հազ. դրամ, 2024 թվականին՝ շուրջ 420995.9 հազ.դրամ: Այլ ընթացիկ ծախսերը կկազմեն համապատասխանաբար 2022 թվականին՝ շուրջ 64231.0 հազ.դրամ, 2023 թվականին՝ շուրջ 67481.3 հազ.դրամ, 2024 թվականին՝ շուրջ 74847.9 հազ.դրամ: Հարկերը (ԱԱՀ-ի գծով) կկազմեն համապատասխանաբար 2022 թվականին՝ շուրջ 80939.5 հազ.դրամ, 2023 թվականին՝ շուրջ 84946.9 հազ.դրամ, 2024 թվականին՝ շուրջ 85194.3 հազ.դրամ, իսկ սարք սարքավորումների, համակարգչային տեխնիկայի, տնտեսական գույքի, ապրանքների, ծառայությունների և այլ կապիտալ ակտիվների ձեռք բերման ծախսերը համապատասխանաբար կկազմեն 2022 թվականին՝ շուրջ 21964.2 հազ.դրամ, 2023 թվականին՝ շուրջ 23062.4 հազ. դրամ, 2024 թվականին՝ շուրջ 24215.5 հազ. դրամ:

Ելնելով վերոշարադրյալից, 2021 թվականի համար բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով

«Փորձաքննությունների ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով ներկայացնում ենք 548990.4 հազար դրամի չափով ֆինանսավորման հայտ:

4.3. Նոր նախաձեռնությունները

2022-2024 թվականների ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում նախատեսվում է փորձագիտական նոր տեսակների և ենթատեսակների, հետազոտական մեթոդների և մեթոդիկաների ներդրում, գիտականորեն հիմնավորված նոր ուղղությունների մշակում և իրականացում, ինչպես նաև՝ նախատեսվում է կատարելագործել և զարգացնել նախորդ տարիներին ներդրված փորձագիտական տեսակները և ենթատեսակները, որոնք հիմնված են նորագույն տեխնոլոգիաների վրա, իրականացվելու են աշխատանքներ արդյունավետ /օպտիմալ/ փորձագիտական մեթոդիկաների և ժամանակակից բարձր տեխնոլոգիական սարք-սարքավորումների կիրառմամբ: Կազմակերպությունը նաև ծրագրում է տարեցտարի շարունակել բարձրացնել համագործակցության մակարդակը միջազգային մի շարք հեղինակավոր գիտական և փորձագիտական կառույցների հետ՝ նպատակ ունենալով առավել արդյունավետ կազմակերպել գիտական, նաև փորձագիտական աշխատանքների իրականացումը կազմակերպությունում, ինչպես նաև՝ առավելագույնս ուսումնասիրել փորձագիտական բնագավառի համար կարևորագույն նշանակություն ունեցող գիտության այս կամ այն ոլորտի միջազգային առաջավոր փորձը՝ հետազայում այն կազմակերպության մասնագիտական ստորաբաժանումներում ներդնելու և կիրառելու նպատակով:

2022-2024 թվականներին կազմակերպությունը պլանավորում է ձեռնամուխ լինել փորձագիտական տվյալների բազաների ընդլայնման և նորերի կազմավորման ըստ առանձին փորձագիտական ուղղությունների՝ հիմնված նաև ժամանակակից թվային տեխնոլոգիաների վրա, զարգացնել գիտական ոլորտները, փորձագիտական տեխնոլոգիաները և մեթոդաբանությունը՝ դարձնելով այն համահունչ միջազգային չափանիշներին և ժամանակակից գիտական պատկերացումներին, մասնավորապես նախատեսվում է՝

- շարունակել «LINTAB» LTM06-E մոդելի սարքի կիրառման և TSAP-Win համակարգչային ծրագրի օգտագործման օգտվելու ընթացակարգերի մշակումն ու տեղայնացումը, դատափորձագիտական բնագավառում դենդրոխրոնոլոգիական բազաների ստեղծման (համալրման) աշխատանքների իրականացման գործընթացը,

- շարունակել «PC Crash» համակարգչային ծրագրի բոլոր հնարավորությունների ներդրման աշխատանքները, սկսել նոր գործընթաց դատափորձագիտական բնագավառում ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների (ՃՏՊ) մոդելավորման բազաների ստեղծման (համալրման) աշխատանքների իրականացման ուղղությամբ,

- վերլուծել և արդիականացնել Կազմակերպությունում գործող բոլոր ստորաբաժանումներին վերաբերող համապատասխան հետազոտական հնարավորություններն ու ընթացակարգերը,

- իրականացնել գործիքային եղանակներով կենսաբանական օբյեկտների /մազ, մեզ, արյուն/ հետազոտություններ՝ տոքսիկոլոգիական փորձաքննություններում առկա մեթոդիկաների կատարելագործման, ինչպես նաև նոր գերժամանակակից գործիքային մեթոդների ներդրման և հնարավորությունների արդիականացման ուղղությամբ: Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է նաև վերանայել և նորացնել գործող հետազոտական մեթոդիկաների կիրառման ընթացակարգերը,

- նախատեսվում է արդեն իսկ շահագործվող ժամանակակից «55 AA» մոդելի բոցային և «200 AA» մոդելի գրաֆիտային ատոմային աբսորբցիոն սպեկտրոմետրերով իրականացնել աշխատանքներ նոր մեթոդների մշակման ուղղությամբ, մասնավորապես՝ նմուշառման, հողերում, ջրերում և այլ օբյեկտներում ծանր մետաղների քանակական հետազոտությունների առավել արդյունավետ իրականացման նպատակով,

- իրականացվելու են աշխատանքներ նկարների ստեղծման ժամկետների հավաստման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների, հայտնի հեղինակների ոճային և կենսագրական տվյալների շտեմարանների համալրման ուղղությամբ, ինչպես նաև շարունակվելու են Կազմակերպությունում իրականացվող մշակութային արժեքների փորձաքննությունների ընթացքում ստացվող տվյալների և մասնագիտական գրականությունում առկա տեղեկատվության համադրման, հետազոտման և վերլուծական աշխատանքները:

- նախատեսվում է ձեռք բերել միջազգային կառույցներում առկա մեթոդիկաներ և ստեղծել հնագիտական-պատմական տվյալների շտեմարան կապված գերեզմանադաշտերի, եկեղեցիների և այլ կրոնական կառույցների, հնագիտական առարկաների կամ դրանց բեկորների վերաբերյալ,

- հիմնվելով այն հանգամանքի վրա, որ կազմակերպությունում առկա է «NITON XL3t» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատոր, որն ունի երկու հավելյալ կարևոր ռեժիմներ, 2022թ-ին շարունակվելու են արդեն իսկ մշակված և հաստատված «Niton XL3t» մոդելի ռենտգեն ֆլուորեսցենտային անալիզատորներով աշխատելու մեթոդի և ընթացակարգի հիման վրա մետաղների և դրանց համաձուլվածքների, այդ թվում՝ մետաղադրամների, թանկարժեք մետաղների, հողերի հանքային բաղադրակազմերի փորձագիտական հետազոտությունները՝ առավել արդյունավետ ռեժիմների կիրառմանը: Ներկայումս ընթանում են մետաղական շերտերի՝ ծածկույթների, ներկանյութերի, կենցաղային, այդ թվում՝ կերամիկական առարկաների մեջ ծանր մետաղների հետազոտության, ինչպես նաև նմուշապատրաստման օպտիմալ մեթոդների մշակման և գործող մեթոդի ու ընթացակարգի լրամշակման հետ կապված աշխատանքներ, որոնք ունենալու են շարունակական բնույթ նախատեսված ժամանակահատվածի ընթացքում,

- 2022-2024 թվականներին շարունակական բնույթ են կրելու դեռևս նախորդ տարիներին սկսած մի շարք այլ փորձագիտական բազաների ստեղծման (համալրման) աշխատանքները, այդ թվում՝ փամփուշտների և պարկուճների, ներկանյութերի, սառը զենքերի նմուշների, տարբեր մակնիշի մեքենաների անվադողերի և դրանց գծանախշերի, օձանելիքների, օրգանական լուծիչների, կեղծ մետաղադրամների բաղադրությունների, թղթադրամների, գնդիկավոր գրելագործիքների, պայթուցիկ նյութերի և դրանց պայթյունի

արգասիքների, մասս-սպեկտրոմետրի, «HP-6890» մոդելի գազ-քրոմատագրման սարքերի և «IR Prestige-21» տիպի Ֆուրյե ձևափոխմամբ ինֆրակարմիր սպեկտրոմետրի կիրառմամբ և այլն:

2022-2024 թվականներին կազմակերպությունում նախատեսվում է սկսել նոր արդիական ուղղություններով որոնողական աշխատանքներ, որոնք դեռևս Հայաստանի Հանրապետության փորձագիտության բնագավառում չեն իրականացվել, ինչը շատ կարևոր է ժամանակին արձագանքելու հանցավորության շարժընթացներին և ներկայիս մարտահրավերներին, ինչպես նաև ներդնելու ողջ ներուժը փորձագիտության բնագավառում ընդլայնելու փորձագիտական հետազոտության հնարավորությունները, մասնավորապես՝

- Փորձագիտական տվյալների բազաների կազմավորում ըստ առանձին գիտական ուղղությունների՝ հիմնված նաև ժամանակակից թվային տեխնոլոգիաների վրա,
- Հայաստանի Հանրապետությունում զարգացնել, ըստ առանձին գիտական ոլորտների, փորձագիտական տեխնոլոգիաները և մեթոդաբանությունը՝ դարձնելով այն համահունչ միջազգային ստանդարտներին,
- Քրեագիտական նշանակություն ունեցող գիտահետազոտական աշխատանքների նոր, արդիական հեռանկարային ուղղությունների ձևավորում,
- Հայաստանի Հանրապետությունում դատափորձագիտական վիճակագրության համակարգի ձևավորում և ներդրում: Փորձագիտական բնույթի աշխատանքներում՝ արդյունքների վերլուծության և մշակման ընթացքում, հավանականության տեսության մեթոդների օգտագործում, այդ թվում՝ Բայեսյան օրինաչափությունների կիրառմամբ,
- Փաստաթղթերի ռեկվիզիտների հարաբերական վաղեմության որոշման քրեագիտական փորձաքննության տեսական և մեթոդաբանական հիմունքների կատարելագործում, նորագույն տեխնոլոգիաների և փորձագիտական մեթոդների ներդրում,
- Փորձագիտական բնույթի աշխատանքների (հետազոտություններ, տեխնիկական փորձարկումներ, վերլուծություններ և այլն) հնարավորությունների ընդլայնման և որակի բարձրացման նպատակով Փորձաքննությունների ազգային բյուրոյի փորձագիտական լաբորատորիաների միջազգային հավատագրում՝ համաձայն ԻՍՕ/ԻԷԿ 17025:2005 միջազգային ստանդարտների պահանջների,
- Փորձագիտության բնագավառի աշխատանքներում հսկողության ուժեղացում, նորագույն հետազոտական, գիտականորեն հիմնավորված տեխնոլոգիաների և մեթոդների ներդրում, նորերի մշակում:

Վերոնշյալ հանգամանքները հանգեցնելու են ծախսատար՝ մասնավորապես նորագույն սարքավորումներով և ժամանակակից տեխնոլոգիաներով Կազմակերպությունում իրականացվող փորձաքննությունների տեսականու ընդլայնմանը, ինչն իր հերթին կհանգեցնի Կազմակերպությանը նշանակվող փորձաքննությունների տեսականու ընդլայնմանը և քանակի աճին: Այդ առումով պետք է նաև նշել, որ, բնականաբար, նախատեսվում է ավելացնել նաև գործող փորձագիտական բաժինների կարողությունները՝ կազմավորելով նաև որոշ նոր ստորաբաժանումներ:

Դատական փորձաքննությունների /քրեադատավարական օրենսդրության շրջանակներում իրականացվող/ կատարման գծով Կազմակերպությունը այլ եկամուտներ չունի:

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Փորձաքննության ծառայություններն ուղղված են Հայաստանի Հանրապետությունում և Արցախի Հանրապետությունում քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից քրեադատավարական ընթացակարգերով նշանակվող դատական փորձաքննությունների պատշաճ որակի և դատավարական ու մեթոդական ընթացակարգերի պահպանմամբ ապացույցների ձեռք բերման միջոցով մինչդատական և դատական քրեական վարույթի իրականացման օժանդակմանը, ինչպես նաև անձի, հասարակության և պետության պաշտպանությանը հանցագործություններից:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ԵՎ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐԸ/ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Արտաքին աղբյուրներից՝ պետական բյուջեի խողովակներով ստացվող վարկերի և դրամաշնորհների հաշվին իրականացվելիք ծրագրեր դատական փորձաքննությունների կատարման գծով Կազմակերպությունը չունի:

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Ոլորտի (համակարգի) գծով ֆինանսական պահանջների ամփոփում 2022-2024թթ. ժամանակահատվածի համար.

Աղյուսակ N 1. Ոլորտի (համակարգի) ծրագրերի գծով 2022-2024թթ ծախսերի կանխատեսում

(հազ. դրամով)

		Հաստատված բյուջե	Կանխատեսում			
Ծագող վիճակի դասիչը	Միջոցառման վիճակի դասիչը	Ծրագրերի անվանումը	2021թ.	2022թ.	2023թ.	2024թ.
		²	1	2	3	4
1013	11001	Փորձաքննությունների ծառայություններ, այդ թվում	335290.6	548990.4	576439.1	605253.6
		Ընթացիկ ծախսեր	319601.9	527026.2	553376.7	581038.1
		Կապիտալ ծախսեր	15688.7	21964.2	23062.4	24215.5
		Ընդամենը պարտավորություններ, որից	335290.6	548990.4	576439.1	605253.6
		Ընթացիկ ծախսեր	319601.9	527026.2	553376.7	581038.1
		Ընթացիկ կապիտալ ծախսեր	15688.7	21964.2	23062.4	24215.5

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Ռիսկի նկարագրությունը	Երևույթի հանդես գալու հավանականությունը ¹	Հնարավոր նպատակների և արդյունքային ցուցանիշների վրա ազդեցությունը	Ռիսկի կանխման/ հաղթահարման հնարավոր ուղիները
Նշանակվող փորձաքննությունների քանակի նվազում	5	Միջոցառման ծավալի համամասնության նվազում	Նորագույն մեթոդների ներդրում, ժամանակակից հետազոտական նորարարական սարքավորումների ձեռք բերում և այլ լրացուցիչ, նաև մարդկային ռեսուրսների ներգրավման ավելացում ազդեցության վերացման համար
Ապրանքներ և ծառայությունների գների բարձրացում	3	Միջոցառման ծավալի իրականացման ժամկետների երկարաձգում	Խնայողությունների կատարում և/կամ լրացուցիչ ֆինանսական միջոցների ներգրավում

Տնօրեն՝

Ա. Հովսեփյան

Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ - գլխավոր հաշվապահ՝

Լ. Հայրապետյան

¹ Ներկայացնել 1-5 թվանշանով, որտեղ 1 թվանշանը ենթադրում է առավել բարձր հավանականություն

Ծրագրի հիմնավորումում նշված տեղեկատվության նախապատրաստման համար պատասխանատուներ՝ տնօրենի տեղակալ փորձաքննությունների գծով Ա.Գահնապետյան, տնօրենի տեղակալ ֆինանսական և տնտեսական հարցերի գծով Խ. Աբաջյան, տնօրենի տեղակալ գիտության գծով Պ.Ոսկանյան, ֆինանսատնտեսագիտական բաժնի տնտեսագետ Ա.Գրիգորյան:

ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿՎԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՈԼՈՐՏԸ

Դատական փորձաքննությունների ոլորտ, որի գործունեությունն առնչվում է դատական և իրավապահ ոլորտների գործունեության հետ, մասնավորապես ապահովելով քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից քրեադատավարական օրենսդրության շրջանակներում նշանակվող դատական փորձաքննությունների իրականացումը:

Մասնավորապես 2022-2024 թվականների համար «Փորձաքննությունների ծառայություններ» /1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով/ ֆինանսական ծրագրով ՄԺԾԾ-ի շրջանակներում ներկայացված հայտի վերաբերյալ հարկ է նշել հետևյալը. ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում համաձայն հաստատված հաստիքացուցակի և գործող կառուցվածքային սխեմայի ներկայումս գործում են 18 փորձագիտական բաժիններ, որոնց գործունեության շրջանակներում կառուցում տեղադրված է դատական փորձաքննությունների իրականացման պետական պատվեր 29 փորձագիտական տեսակներով, որոնք են՝ ձեռագրաբանական, հեղինակային, փաստաթղթաբանական, ֆոտոտեխնիկական, դիմանկարային, հետքաբանական, ձգաբանական, պայթյունատեխնիկական, նյութագիտական, սննդային, տեսաձայնագրառման, հրդեհատեխնիկական, շինարարատեխնիկական, ճանապարհատրանսպորտային պատահարների հանգամանքների, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի, տրանսպորտային հետքաբանական, տնտեսագիտական, ապրանքագիտական, համակարգչային-տեխնիկական, մշակութային արժեքների, հոգեբանական, դատաբժշկական, դատաքիմիական (թունաբանական), կենսաբանական (հողագիտական), դատագենետիկական (ԴՆԹ նույնականացման), օդորոլոգիական (այդ թվում մարդու կողմից թողնված հոտային հետքերի), ճարտարագիտատեխնիկական, լինգվիստիկական, դատաէկոլոգիական:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հիմնական թիրախներն են՝ քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինների կողմից նշանակվող դատական փորձաքննությունների պատշաճ իրականացմամբ համապատասխան որակի և դատավարական ու մեթոդական ընթացակարգերի պահպանմամբ ապացույցների ձեռք բերման միջոցով օժանդակել մինչդատական և դատական քրեական վարույթի իրականացմանը, ինչպես նաև անձի, հասարակության և պետության պաշտպանությանը հանցագործություններից:

Տվյալ ծախսային ծրագրի իրականացման արդյունքում պետական պատվերի շրջանակներում փորձագիտական ծառայություններ կմատուցվեն նախաձեռնող այնպիսի իրավասու մարմիններին, ինչպիսիք են քրեական հետապնդում և արդարադատություն իրականացնող մարմինները՝ Հայաստանի Հանրապետության դատարանները, Հայաստանի Հանրապետության դատախազությունը, Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությունը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը և փոքր թվով Արցախի Հանրապետության դատարանները և համապատասխան լիազորություններ ունեցող այլ մարմինները:

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2019 թվականի ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 29 փորձագիտական տեսակներով փորձաքննություններից գերակայել են հիմնականում՝ նյութագիտական (1676 հատ), ապրանքագիտական (1353 հատ), կենսաբանական (1132 հատ), փաստաթղթաբանական (1009 հատ), դատաքիմիական /թունաբանական/ (941 հատ), ձեռագրաբանական (772 հատ), հետքաբանական (720 հատ) փորձաքննությունների տեսակները:

2020 թվականի ընթացքում ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 29 փորձագիտական տեսակներով փորձաքննություններից գերակայել են հիմնականում՝ նյութագիտական (2162 հատ), ապրանքագիտական (2043 հատ), կենսաբանական (1078 հատ), հետքաբանական (845 հատ), փաստաթղթաբանական (844 հատ), դատաքիմիական /թունաբանական/ (466 հատ), ձեռագրաբանական (457 հատ) փորձաքննությունների տեսակները:

Հիմք ընդունելով 2019-2020 թվականների ընթացքում կատարված փորձաքննությունների տեսակների գերակայությունը կարելի է կանխատեսել, որ այն կրելու է շարունակական աճը պահպանող բնույթ նաև 2022-2024 թվականների ընթացքում:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Գոյություն ունեցող ծախսային ծրագրերը (պարտավորությունները)

Հիմք ընդունելով վերոգրյալները, և նախորդ տարիների ընթացքում իրականացված փորձագիտական ծառայությունների տեսականու ընդլայնումը և 2019-2020 թվականների ընթացքում արդեն իսկ տեղ գտած զգալի քանակական աճը, 2022-2024 թվականների համար ձեռք բերվող դատական փորձաքննությունների գծով կանխատեսվում է տարեկան միջինում նվազագույնը 10%-ի չափով ֆինանսավորման աճ: Համաձայն վերը նշված համեմատականների և կանխատեսումների անհրաժեշտ է պետական բյուջեի 1013 ծրագրի 11001 միջոցառման դասիչով «Փորձաքննության ծառայություններ» ֆինանսավորվող ծրագրով (որը 2020 թվականի համար կազմել է 345286.5 հազ. դրամ, 2021 թվականի համար կազմել է 335290.6), 2022 թվականի համար նախատեսել 548990.4 հազ. դրամ, 2023 թվականի համար նախատեսել 576439.1 հազ. դրամ, իսկ 2024 թվականի համար՝ 605253.6 հազ. դրամ, ինչը, ինչպես արդեն նշվել է, ենթադրում է 2022 թվականի համեմատ միջին տարեկան շուրջ 5%-ի չափով աճ՝ 2023-2024 թվականների համար՝ հաշվի առնելով իրականացվող փորձագիտական ծառայությունների տեսականու (այդ թվում ենթատեսակների և տեխնոլոգիական ուղղությունների) տարեցտարի աստիճանաբար ընդլայնումը և որոշակի արժեքային աճը, ինչպես նաև փորձաքննությունների պատշաճ որակի ապահովման անհրաժեշտությունը:

Տնօրեն՝

Ա. Հովսեփյան

Ֆինանսատնտեսագիտական բաժնի
պետ - գլխավոր հաշվապահ՝

Լ. Հայրապետյան

Ծրագրի հիմնավորումում նշված տեղեկատվության նախապատրաստման համար պատասխանատուներ՝ տնօրենի տեղակալ փորձաքննությունների գծով Ա.Գահնապետյան, տնօրենի տեղակալ ֆինանսական և տնտեսական հարցերի գծով Խ. Աբաջյան, տնօրենի տեղակալ գիտության գծով Պ.Ոսկանյան, ֆինանսատնտեսագիտական բաժնի տնտեսագետ Ա.Գրիգորյան: